

112

№ 9 ՍԱՐՔԻՆԱԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 9

Կ. ՄԱՐՔՈ

ԱՇԽԱՏԱՎԱՐՁ,
ԳԻՒ ՅԵՎ ՇԱՀՈՒՅԹ


3K13

Ա - 65

ԱՀՐԱՏ

1932

ՑԵՐԵՎԱՆ



14 NOV 2009

2005

№ 9 ՄԱՐԳԱՐԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 9

3K13

Ա - 65

մր'

Կ. ՄԱՐԳԱՐ

Ա. Շ Խ Ա Տ Ա Վ Ա Ր Ձ,
Գ Ի Ւ Յ Ե Վ Շ Ա Հ Ո Ւ Յ Թ

Ուսու. բարգի. լեզվ. [redacted]

ԿՈՒԶԲԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

26 JUN 2013

112

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՌԴԹԱՎ

Բանվոր գասակարդի և աշխատավորական մասաների կուլ-
տուր-քաղաքական վիճակարի վերելքը մեր յերկրում և հատկապես
առվարտության վերիտասարդական հոծ զանգվածների դեպի գիտություն
տածած ծարավը՝ այսոր ավելի քան հրամայական կերպով հրա-
գորակի վրա յե գնում Մարքսի, Ենդելսի և Լենինի յերկերի հայե-
րեն թարգմանության շուտափույթ ավարտման գործը : Կ. Մարքսի
անտեսագիտական աշխատություններից, դժբախտաբար, մինչեւ
որու միայն հրագարակված և «Էլարձու աշխատանքն ու կապի-
տալը» :

Չնայած այն հանգամանքին, վոր ուստերեն լեզվով արագա-
րար վերահրատարակվում են մարքսիզմ-լենինիզմի կլասիկների
կտրենրագույն գործերը, սակայն փաստ ե, վոր տակալին աշխա-
տավորական լայն խավերն ի վիճակի չեն պետք յեղած չափով
ադրբեյլու այդ գրականությունից, լեզվին չափապետելու պատ-
ճառով : Այս տեսակետից գրեթե աննախանձելի դրություն և ապ-
րում մեր մասսայական ուսանողությունը : Գաղտնիք չե, վոր մեր
բարձրագույն ստումնատական հիմնարկություններն ավարտողների,
մենք կասեցինք, մեծ մասն ի մոտո չի շոշափել վոչ միայն Կարէ
Շաբախի «Կապիտալի» առաջին հատորը, այլև այնպիսի գործեր,
վորոնք աչքի յեն դարնում վոչ միայն մտքի խորությամբ, այլ
ժամանականությամբ («Քաղաքացիության առթիվ», «Փի-
լիստիայության թշվառությունը»), ինչպես, որինակ, մեր թարգ-
մանած «Աշխատավարձ, գին և շահույթ»ը :

Հայտնի յե, վոր սոցիալիստական զարգացման ալյալ ետա-
պում չեշտակի սրությամբ առաջին պլանի վրա յե գրվում մատ-
ուսների մարքս-լենինյան գաստիարակության ծավալման և խո-
րացման խնդիրը : Մեզ համար այժմ տուանձնակի կարևորություն
և ներկայացնում նաև կուսակցական ընկերների քաղաքական-զա-
գագահական մակարդակի սիստեմատիկ բարձրացումը : Այս առը-
գությամբ հույժ կարենը և մարքսիզմ-լենինիզմի կլասիկների ման-
դաղնին ու քրանտշան ուսումնասիրությունն անմիջական աղբյուր-



5804
38

ների հիման վրա : Ահա թե ինչու մենք առանձին հաճույքով հանձն առանք կ . Մարքսի «Աշխատավարձ , գին և շահույթ» դրբույթի թարգմանությունը :

«Աշխատավարձ , գին և շահույթ» խորագիրը կրող այս գրքույթը ներկայացնում է 1 ինտերնացիոնալի Գլխավոր Խորհրդում կարգացած՝ կ . Մարքսի դեկուցադիրը (1863թ .) : Մարքսի տնտեսագիտական ուսմունքին իրազեկ ընթերցողը գյուրությամբ կնկատի , վոր այս գործն ըստինքյան հանդիսանում ե նրա «Կապիտալի» — մարդկային մտքի այդ անհաս կոթողի , ամենատարրական և միաժամանակ խիստ ամփոփ համառոտագրությունը : Այստեղ արծարձված ինդիբներն ու տնտեսադիտական կատեգորիաներն իրենց ծագման և լիակատար ավարտին են հասցված «Կապիտալի» առաջին հատորում :

Ի՞նչն ե աչքի զարնում այս աշխատության մեջ : Ամենից առաջ ե ըուլորից ավելի՝ վոճի պարզությունը և նյութի հանրամատչելի շարադրանքը մտքի խորության հետ զուդորդված , մի բան , վորից , զիրոխտաբար , զուրկ են այդ բնագավառում վորոշ տնտեսագիտ մարքսիստներ :

Այս խկ տեսակետից նույնպես մենք շատ բան պետք ե սովորենք կ . Մարքսից և Լենինից :

Իհարկե , սխալ կ իներ առել , վոր աշխատավարձի , գնի և շահույթի խնդիրները կ . Մարքսը սպառիչ կերպով տվել ե այս ուժեղաբառում : Այդ ինդիբը նա կատարել ե արդեն այն ժամանակ տպաղբության պատրաստվող «Կապիտալում» : Վերև մատնանշված իր գիկուցման մեջ կ . Մարքսը կամեցել ե տաւ վերոհիշյալ հարցերի թուուցիկ , բայց հիմնավորված շարադրանքը :

Այստեղ կարեոր ե ի դեպ մեր ընթերցողի ուշադրությունը քենուել նաև այն ընորոշ կողմի վրա , վորը հատուկ ե մարքսիզմինինիզմին : Այդ նրա քննադատական դիմակական վորին ե : Յեվ բնավ պատահական չե , վոր մարքսիզմ-լենինիզմի կլասիկների՝ Մարքսի , Ենդելսի , Լենինի և Ստալինի բոլոր գործերն առանց վորեւ խորության հաղեցած են քննադատության վորով : Յեվ այն ել կոնկրետ քննադատությամբ : Այս տեսանկյունից ել մոտենալով հարցին , առանձին հետաքրքրություն ե ներկայացնում աշխատավարձ , գին և շահույթ» գրքույկը : Դժվար չե նկատել ,

վոր Մարքսի մոտ նյութի դրական շարագրումն սկզբից ևեթ խարսխվում ե իր հակառակորդի վոչ-զիտական հայացքների քննադատության վրա :

Առաջին ինտերնացիոնալի կազմակերպման եպոխայում Յեվրոպայի բանվորական շարժման մեջ աննշան տեղ չեր գրակում մարդկանց այն ուղղությունը , վորն ավելորդ եր համարում պրոլետարիատի մղած տնտեսական կոմիտ կապիտալիզմի դեմ : Հենց իման «սոցիալիստների» թվին եր պատկանում նաև առաջին ինտերնացիոնալի պատղամամակոր Զոն Վետոտնը : Վեստոնը պատկանում եր ուստապիստ սոցիալիստ Ռուբերտ Ուուենի շկոլային , վորն անձկաւմ եր մանր բուրժուական «արմատական» միջոցառումներով՝ բանվորական բանկեր , բանվորական փողեր հիմնեցվ , բարելավել բանվոր զատակարգի դրությունը : Զոն Վեստոնը դեմ եր բանվորական դործադուլներին այն պատճառով , վոր իրը թե աշխատավարձի բարձրացումը տվյալ յերկրում անպայման առաջացներույթ ապրանքների զների բարձրացում , ապա ուրեմն այն կատարվում ե ի վնաս բանվոր զատակարգի : Այս հիմնական գրությունների քննադատությամբ ել զբաղվում ե կ . Մարքսը մեր թարգմանած գրքույկում : Պատմական փաստերի ահագին կույտով , անտեսական հասարակական յերկույթների խորաթափանց վերաբարձրացման համար կ չեք ե գարձնում Վեստոնի փաստարկումները , վորոնք ուղղված ենին զեպի պրուգոնիզմի և լասաւականության արգարացումը :

Մյժմ մեղ համար կենսական անհրաժեշտություն ե ներկայացնում անողոք պայքար մղել իրականության մեջ արմատավորված՝ աշխատավարձի «ձախ» հավասարեցման դեմ : Մենք պետք ե այդ պրակատիկ պայքարը լուսավորներ մարքսիզմ-լենինիզմի տեսության ջահով : Հենց այս գրքույկն ել կուսակցության գծի համար պայքարով ընկերոջ կոտ ճիշտ գաղափար և հայացքների պարզություն , մանավանդ աշխատավարձի հարցում : Այս իմաստով ել առայն գրքույկը բնավ չի կորցրել իր այժմեյականությունը :

Ա . Ա -ն

23 աշուտոսի 1932 թ .
Յերեան:

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԻՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքացիներ,

Նախքան իմ ուժքերատի հիմնական առարկային անցնելը յև պետք է ձեր թույլտվությունը խնդրեմ միջանի ներածական դիտություններ անելու համար :

Վերջին ժամանակներս յեզրոպական ցամաքի վրա տիրապետում և գործադրուների խսկական համաճարակ և ընդհանրական ձգտում դեպի աշխատավարձի բարձրացումը : Այս հարցը դրվելու յի նաև մեր կոնդրեսում¹⁾ : Դուք, ինտերնացիոնալի²⁾ գլուխ կանոնածներդ այս դիմապով հարցի վերաբերյալ պետք է հաստատ համոզում ունենաք : Այս պատճառով յես իմ պարտքն եմ համարում, նույնիսկ ձեր համբերությունը ծանր փորձության վտանգին յենթարկելու դեպքում, այն քննարկել հիմնականորեն :

Մյուս ներածական դիտողությունը՝ վոր յես ցանկանում եմ անել, վերաբերում և քաղաքացի վեստոնին³⁾ : Վերջինս վերին աստիճանի վոչ-մուպուլյար հայացքներ ունի բանվոր զասակարգի մեջ, ինչպես նա ինքն ել գիտե, բայց դրանք (այդ հայացքները: Ա. Ա.) նա, համարելով բանվորի չահերին համապատասխան, վոչ միայն շարադրեց այստեղ ձեր առաջ, այլև հրապարակորեն պաշտպանում է : Մենք պետք են գնահատենք բարոյական արխության նման ապացույցները : Յես հույս ունեմ, վոր, չնայած իմ ուժքերատի սուր տոնին, վեստոնը վերջում կտնենի, վոր յես համաձայնվում եմ այն ճիշտ զաղափարների հետ, վորոնք, ինչպես ինձ թվում են, դրված են նրա դրությունների հիմքում, բայց այդ գաղափարներն իրենց խսկական ձեռվ համարում եմ թեորիապետական, իսկ իրենց ոլրակտիկ գործադրման մեջ՝ վտանգավոր :

Այժմ յես կանցնեմ մեր այսորվա առարկայի անմիջական քննարկմանը :

¹⁾ Այս գեկուցումը կարդացվել է 1865 թ. սեպտեմբերին կայսցում՝ Վիշպային Գլխավոր Խորհրդի սեսաում:

²⁾ Խոսքը վերաբերում է 1 խստերացիոնալին:

³⁾ Պատկամավորներից մեկն է վեստոնը:

Քաղաքացի վեստոնի փաստարկումը հիմնվում է փաստորեն յերկու յենթադրության վրա :

Առաջին, վոր ազգային արտադրության ընդհանուր չափն ինչ-վոր նշտորեն սահմանված մի բան է, մշտական քանակություն, կամ, ինչպես կարտահայտվեր մտթեմատիկուր՝ անփոփոխ մեծություն է :

Եերկրորդ, վոր ուալ աշխատավարձի ընդհանուր գումարը կամ, այլ խոսքով՝ այն գումարը, վոր չափվում է սպասման առարկաների քանակով, վորոնք կարող են գնվել նրանով, նշտորեն ահմաննված մի գումար է, հաստատուն մեծություն :

Ակներև ե, վոր նրա առաջին յենթադրությունը բոլորովին սխալ է : Դուք գիտեք, վոր արտադրության արժեքն ու մասսան արեցտարի աճում են, վոր աղդային աշխատանքի արտադրողական ուժերն աճում են, և վոր մեծացող արտադրության դեպքում կան աղդային աճում են, և վոր մեծացող արտադրության դեպքում կան ուժերն աճում են : Ինչ վոր ճիշտ ե ամբողջ տարվա և յերկու տարրեր, համեմատելի տարիների համար, այլ ճիշտ ե նույնպես և տարվա յուրաքանչյուր որվա համար : Աղդային արտադրության ծավալը կամ քանակը մշտական փոփոխվում է : Նա իրենից ներկայացնում է վոչ թե մշտական, այլ փոփոխական մեծություն, վորն աղդաբնակչության շարժումից բոլորովին անկախ, չափաղանց զգայական և աշխատանիքի արտադրողական ուժի և կապիտալի կուտակման պրոցեսի մշտական փոփոխության հանդեպ : Միանդամայն ճիշտ է, վոր յեթե այժմ աշխատավարձի ընդհանուր մակարդակը, ապա այս բարձրացումը, ինչպես ել վոր լենեյին նրա վերջնական արդյունքները, ինքնին չեր առաջացնի արտադրության ծավալի անմիջական փոփոխություն : Այդ բանը տեղի կունենար սկզբում իրերի գոյություն ունեցող գրության հիման վրա : Յեթ յեթե աղդային արտադրությունը մինչև աշխատավարձի բարձրացումը մասը փոփոխվող և չսահմանված, ապա նա փոփոխվող և չսահմանված կմնար նաև աշխատավարձի բարձրացումից հետո :

Բայց յենթադրենք, վոր աղդային արտադրության մեծությունը հաստատուն է, և վոչ թե փոփոխական : Անդամ այս զեպքում այն ամենը, ինչ մեր բարեկամ վեստոնը համարում է արամարանական յեղակացություն, լոկ կամայական պնդում կլիներ : Յեթե յետ ունեմ վորոշ թիվ, ասենք՝ ութ, ապա այս թվի բացարձակ սահմանական դիմումը կամ աշխատավարձի բարձրացումից հետո :

մանները չեն խանգարում նրա մասերին փոխելու նրանց հարաբերական սահմանները: Յեթե շահույթը հավասար է վեցի, իսկ աշխատավարձը՝ յերկսի, ապա աշխատավարձը կարող է բարձրանալ մինչև վեցի, իսկ շահույթը իշնել յերկսի, և այսուհանդերձ ընդհանուր գումարը կմնա հավասար ութի: Հետևաբար, արտադրության հաստատ առհմանված քանակը վոչ մի դեպքում չեր կարող վկայել աշխատավարձի գումարի հաստատ առհմանման մասին:

Իսկ ի՞նչպես ե ապացուցում վերջինիս անփոփոխ լինելը մեր բարեկամ վեստոնք: Նա պարզապես պնդում է, վոր այս այսպես-է: Բայց յեթե անդամ յենթագրենք, վոր նրա հաստատած յերկույթին խակապես գոյություն ունի, ապա այն կզործեր յերկու կողմից, մինչեւ վեստոնը նրան ստիպում է զործել միայն մեկ ուղղությամբ: Յեթե աշխատավարձի քանակը հաստատուն մեծություն է, ապա այն չի կարելի վո՞չ բարձրացնել, վո՞չ ել իջեցնել: Հետեւաբար, յեթե բանվորները հիմարություն են անում, ձգտելով աշխատավարձի ժամանակավոր բարձրացման, ապա կապիտալիստները պահապ հիմարաբար չեն վերաբերվում, յերբ նրանք ձդում են աշխատավարձի ժամանակավոր իջեցման: Մեր բարեկամ վետոնը չի ժիտում, վոր վորոշ հանգամանքներում բանվորները կարող են հասնել աշխատավարձի բարձրացման, սակայն քանի վոր աշխատավարձի ընդհանուր քանակը բնության որենքով սահմանված մեծություն է, ապա այս բարձրացմանը պետք է հաջորդի ուղարկիս: Բայց նա գիտե, վոր կապիտալիստները կարող են հասնել աշխատավարձի իջեցման և փաստորեն մշտապիս ձդում են այդ բանին: Համաձայն աշխատավարձի ընդհանուր քանակության անփոփության ոկրունքի, այս դեպքում նույնպես, ինչպես և նախորդ դեպքում, պետք է հետեւ ուղարկիս: Այս պատճառով բանվորները ճիշտ կդորձնեն, յեթե հակառակեն աշխատավարձի յենթադրով կամ պահանջվող իջեցման: Հետևաբար, նրանք ճիշտ կվարվեն, յեթե ձգտեն աշխատավարձի բարձրացման, վորովհետեւ ամեն մի հակագրծություն աշխատավարձի իջեցման դեմ մի զործողություն է, ուղղված նրա բարձրացման համար: Այս պատճառով, ևնց համաձայն քաղաքացի վեստոնի աշխատավարձի ընդհանուր քանակի անփոփոխության սկզբունքի, բանվորները վորոշ հանգամանքներում պետք է միանան և պայմանական աշխատավարձի բարձրացման համար:

Յեթե նու վիճարկում է այս յեղակացությունը, ապա նա պետք է չրաժարի նուև այն հիմնական դրումից, վորից բղխում է այն:

Կա չվետք և ասի, թե աշխատավարձի գումարը հաստատապես սահմանված մեծություն է, այլ պետք է ասի, վոր չնայած այն չի կարող և չպետք է բարձրանալ, բայց կարող և միշտ պետք է իջնի, յերբ կապիտալիստին ձեւնառու յե իջեցնել այն: Յեթե կապիտալիստին համեմ յետելի յե մաս փոխարեն ձեզ կերակրել կարտոֆիլով, ցարեն փոխարեն վարսակով, ապա գուք պետք է նրա կամքը համարեք քաղաքանատեսության որենքը և յենթարկվեք նրան: Յեթե աշխատավարձի մակարդակը մի յերկում բարձր է, քան մյուսում, որինակ, Միացյալ Նահանգներում բարձր է, քան Անդիայում, ապա գուք նման տարբերությունը պետք է բացատրեք ամերիկյան և անդիայան: Կապիտալիստների ցանկությունների տարբերությամբ, մի մեթոդ, վորը, հավանական է, նշանակելի չափով կողարզեցներ վոչ միայն տնտեսական, այլ նաև մնացած բոլոր յերեսությունների ուսումնասիրությունը:

Սակայն նույնիսկ այս գեպքում ել մենք կարող ելինք հարցնել. ինչու ամերիկյան կապիտալիստների ցանկությունները տարբեր գուման անդիական կապիտալիստների ցանկություններից: Իսկ վորպեսողի այս հարցին պատասխանենք, մենք պետք է գուրս զանք ցանկությունների բնադավագուցից: Քարոզիչը կարող է ինձ պատմել, թե աստված Ֆրանսիայում մի բան է ուզում, իսկ Անդիայում՝ այլ բան: Յեթե յես պահանջելի այս ցանկության յերկակիության բացատրությունը, ապա նա կարող եր բավականաչափ պղնձե ճառականական վագրելիքի վրա պատկանական աշխատավարձի իջեցման միջնական աշխատավարձի բարձրացման մշտապիս ձդում են այդ բանին: Համաձայն աշխատավարձի ընդհանուր քանակության անփոփության ոկրունքի, այս դեպքում նույնպես, ինչպես և նախորդ դեպքում, պետք է հետեւ ուղարկիս: Այս մեր բարեկամ վեստոնն, իւարկե, չի դիմե ամեն տեսակ բանական յեղակացություններ բացատրող նման փառարկելի:

Անկառած՝ կապիտալիստների ցանկությունն է վորքան կարելի յե շատ ստանալ: Բայց մենք յենթադրում ենք այժմ չդիմել կապիտալիստների ձգտումները, այլ հետազոտել նրանց հզորությունը, այդ հզորության սահմանները և այդ սահմանների բնույթը:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԱՇԽԱՏՈՎԱՐՉ. ՇԱՀՈՒՅԹ

Այս մտքերը, վոր այստեղ արտահայտեց քաղաքացի վեստոնը, ապա կերպով կարող են տեղավորվել ընկույզի կծեպի մեջ:

Նրա բոլոր ապացուցումները հանգում են հետեւալին: Յեթե բանվոր պատճառով ստիպված կապիտալիստներին փողային աշխ-

առաջարձի ձևով իրեն վճարել չորսի փոխարեն հինգ շիլլինդ, ապա կաղիտալիստն, իր հերթին, նրան կվերադարձնի ապրանքների ժեռվ, չորս շիլլինդանոց արժեք, հինգ շիլլինդ փոխարեն: Բանվոր դասակարգը պետք է հինգ շիլլինդ վճարի այն բանի համար, ինչ նա մինչև աշխատավարձի բարձրացումը դնում եր չորս շիլլինդով: Բայց ինչի՞ց ե առաջ դալիս այս: Ինչո՞ւ կապիտալիստը հազի փոխարեն տալիս ե միայն չորս շիլլինդ: Այն պատճառով, վոր աշխատավարձի գումարը հաստատավես սահմանված ե: Բայց ինչո՞ւ վերջինս վորոշված ե չորս շիլլինդի արժեք ունեցող ապրանքով: Ինչո՞ւ չի առված յերեք, յերկու կամ վորեն ուրիշ գումարը: Յեթև աշխատավարձի գումարի սահմանները ճշտորեն վորոշված են անտեսական որենքով, վորը կախում չունի վոչ կապիտալիստների և վոչ ել բանվորների ցանկություններից, ապա առաջն բանը, վոր պետք ե կատարեր քաղաքացի Վեստոնը, այն և, վոր շարադրեր և ապացուցեր տվյալ որենքը: Սրանից բացի, նու գետք ե ապացուցեր, վոր ամեն մի տվյալ մոմենտի վճարվող աշխատավարձի փաստական գումարը ճշտորեն համընկնում ե աշխատավարձի անհրաժեշտ գումարի հետ և յերբեք վերջինից չի շեղվում: Իսկ յեթե աշխատավարձի գումարի տվյալ սահմանները հիմնված են միայն կապիտալիստի ցանկության կամ նրա ազահության աստիճանի վրա, ապա այդ սահմանները միանդամայն կումայական են: Նրանք ինքնին վոչ մի անհրաժեշտ բան չեն ներկայացնում: Նրանք կարող են փոփոխվել կապիտալիստի ցանկությամբ, —հետեւաբար, կարող են փոփոխվել նաև նրա ցանկության կակտուակ:

Քաղաքացի Վեստոնն իր թեորիան նկարազարդում ե այսպիսէ որբնակով: յեթե սուլամանում վորոշ քանակությամբ սուլա հատկացված ե վորոշ քանակության մարդկանց համար, ապա դդաների չափերի մեծացումը չի ավելացնի սուլպի քանակը: Նա ինձ պետք ե թույլ տա իրնկարազարդումը համարել բարձական յերեխայտան: Այն ինձ հիշեցրեց Մենենիա Ագրիպապայի առակը: Յեթև հասմերական պլեբեյներն ապատամբեցին Հոռմի պատրիկների դեմ, այն ժամանակ պատրիկ Ագրիպան նրանց բացարում եր, վոր պատրիկական ստամոքսը սնուցանում ե պետական մարմնի պլեբեյական անդամներին. բայց Ագրիպան մոռացավ ապացուցել, վոր մեկի սուամոքսը լցնելով կարելի յե սնուցանել մյուս մարդու

անդամները: Քաղաքացի Վեստոնն իր հերթին բոլորովին մառացնէ ե, վոր այն սուլամանը, վորից սնվում են բանվորները, լցված և ողղային աշխատանքի բոլոր արդյունքներով, և վոր այդ սուլամանից շատ վերցնելուն խանդարում ե վոչ թե նրա փոքրությունը, վոչ թե նրա բովանդակության աղքատությունը, այլ բացառապես նրանց գդալների չափերի փոքրությունը:

Ի՞նչպես կապիտալիստը կարող է հինգ շիլլինդանոց արժեքով վաճառել չորս շիլլինդով: Այն պատճառով, վոր նա բարձրացնում է իր վաճառած ապրանքի գինը: Բայց մի՞թե ապրանքի գնի բարձրացումը կամ, ընդհանրապես արտահայտված՝ գնի փոփոխությունը կամ, ընդհանրապես ապրանքների գները կախված են միայն կոռպիտալիստի ցանկությունից: Մի՞թե, ընդհակառակը, չպետք ե գոյություն ունենան վորոշ պայմաններ, վորոշեսզի այս ցանկությանը իրական ուժ հաղորդեն: Յեթև այդ այդպես չե, ապա շարհական գնի բարձրացումներն ու անկումները, մշատական սառաւմները դառնում են անլուծելի հանելուկ:

Յեթև մենք յենթաղրենք, վոր փոփոխություն չի կատարելիք վոչ աշխատանքի արտադրողական ուժի, վոչ ծախոված կապիտալիք և աշխատանքի քանակի և վոչ ել փողի արժեքի մեջ, վորոշ գնահատվում ե արդյունքների արժեքը, այլ փոփոխվել ե միայն աշխատավարձի մակարդակը, ապա աշխատանքի բարձրացումը կ՞նչպես կարող եր ազդել արագիների գնի վրա: Միայն այնպես, վոր այն կարող եր աղջեցություն գործել այս ապրանքների պահանջի և առաջարկի փաստական հարաբերակցության վրա:

Միանդամայն ճիշտ ե, վոր բանվոր դասակարգը, յեթև նրան գիտենք իրենք մի ամբողջություն, իր յեկամուսուր ծախոսւմ և և պիտի ծախսի իր կենսական անհրաժեշտ պաշարների վրա:

Աշխատավարձի մակարդակի ընդհանուր բարձրացումը պատճենական առաջ եր բերելու անհրաժեշտ գոյամիջոցների պահանջի բարձրացում, և հետեւաբար նաև նրանց շուկայական գնի բարձրացում: Կենսական այդ անհրաժեշտ պաշարներ արտադրականի փոխական առաջարկություններն աշխատավարձի բարձրացման համար վարձահատույց կլինելին իրենց ապրանքների շուկայական գների բարձրացումով: Բայց ի՞նչպես ե մյուս կապիտալիստների գրությունը, վորոնք անհրաժեշտ գոյամիջոցներ չեն արագորում: Մի կարծեք թե նման կապիտալիստներն անշատ թիվ են: Յեթև գուք հաշվ առնեք, վոր աղջային արտադրության յերկու յերրորդն սպառում և ապրաբնակչության միայն մեկ հինգերորդ մասը, —համայնքների

շարառի անզտմներից մեկը վերջերս հավասարութ եր, վոր նոյն-
եխով սպառում և միայն մեկ յոթերորդ մասը, —ապա դուք կհաս-
կանաք, թե ազգային արտադրության վորպիսի հսկայական մասն
և հանդես դալիս իբրև պերճանքի առարկաներ, կամ փոխանակվում
պերճանքի տուրքաներով, և վերջապես, կյանքի համար անհրա-
ժեշտ մթերքների վորպիսի՝ հսկայական քանակություն մսավում
և լակեյների, ձիերի, կատունների և նման բանների վրա։ Այս չուա-
լությունը, ինչպես մենք փորձից գիտենք, գոյամիջոցների գների
բարձրացման հետևանքով նշանակալի չափով պակասում է։

Տեսնենք, թե ինչպես կլիներ այն կապիտալիստների գրությու-
նը, վորոնք արտադրում են վոչ անհրաժեշտ դոյամիջոցներ։ Աշ-
խատավարձի ընդհանուր բարձրացման հետևանքով առաջացած
շահույթի մակարդակի իջեցման փոխարեն նրանք չեյին կարող
իբրև նվիրահատուց լինել ապրանքների գների բարձրացումով,
գորովճառու այդ ապրանքների պահանջը չեր ավելանա։ Նրանց յե-
կամուռները կնվազեցին, և այս պակասած յեկամուռներից նրանք
դեռք և ավելի մեծ զումար վճարելին նախկին քանակի դոյամի-
ջոցների համար գների բարձրացման պատճառով։ Սակայն այս
գեր բոլորը չեն։ Քանի վոր նրանց յեկամուռները կնվազեցին, ապա
նրանք պետք և ամենի քիչ ծախսեցին պերճանքի առարկաների վրա,
և այսպիսով կարակառը նրանց սեփական պահանջը համապատաս-
խան ապրանքների նկատմամբ։ Պահանջի նվազման հետևանքով
կիշնեցին նրանց ապրանքների գները։ Այսպիսով, արդյունաբերու-
թյան այդ ճյուղերում շահույթի մակարդակը պարզապես կընկնելի
վոչ թե աշխատավարձի ընդհանուր բարձրացման պարզ հարաբե-
րությամբ, այլ աշխատավարձի ընդհանուր բարձրացման, կենսա-
կան պաշարների գների բարձրացման և պերճանքի առարկաների
գների անկման փոխազգեցության համապատասխան։

Ի՞նչպիսի հետևանքներ կունենար արդյունաբերության տար-
բեր ճյուղերում ներդրված կապիտալների շահույթի մակարդակ-
ների այս տարբերությունը։ Ակներև ե, ճիշտ այնպիսի հետևանք-
ներ, վորոնք առաջվում են՝ յերբ վորևէ պատճառով փոփոխու-
թյուն և առաջանում արտադրության տարբեր ճյուղերի միջին շա-
հույթի մեջ։ Պակաս յեկամտաբեր ճյուղերից կապիտալն ու աշխա-
տանքը կանցնեն արտադրության ավելի յեկամտաբեր ճյուղեր,
և այս անցումը կարունակվի մինչև այն ժամանակ, քանի գեր ար-
դյունաբերության վորոշ ճյուղերում տեղի չի ունենա ավելացում։

Ճյուս ճյուղերում մեծացած պահանջի համեմատ—նվազումը չի
համապատասխանի իջած պահանջին։ Յերբ նման անցումը լիովին
ավարտվի, արդյունաբերության բոլոր ճյուղերում շահույթի ընդ-
հանուր մակարդակը կրկին կհավասարվի։ Քանի վոր բոլոր տեղա-
շարժերն առաջացան միայն տարբեր ապրանքների պահանջի և
առաջարկի հարաբերության փոփոխության հետևանքով, առա-
պատճառի վերացման հետ կիերանա և նրա աղդեցությունը, և
գները կվերադառնան իրենց նախկին չափերին ու հավասարակշռու-
թյանը։ Աշխատավարձի բարձրացման հետևանքով առաջացած
շահույթի մակարդակի իջեցումը չեր սահմանափակվի արտադրու-
թյան մեկ ճյուղով, այլ կդառնար ընդհանուր։ Մեր յենթագրու-
թյան համապատասխան՝ փոփոխություն չի կատարվի վոչ աշխա-
տանքի արտադրողական ուժերի, վոչ արտադրության ընդհանուր
մասսայի պրոդուկտների մեջ, միայն վորոշ քանակ կիփոխի իր ձեւ։
Պրոդուկտների մեծ մասը կսկսեր արտադրել իրեւ կյանքին ան-
հրաժեշտ մթերքներ, փոքր մասը՝ իրեւ պերճանքի առարկաներ
կամ՝ վոր միևնույնն ե՝ փոքր մասը կիփոխանակվեր արտասահմա-
նյան պերճանքի առարկաների հետ, իսկ մեծ մասը կսղառվեր իր
սկզբնական կերպարանքով, կամ՝ վոր դարձյալ միևնույնն ե՝ տե-
ղական պրոդուկտների մեծ մասը կիփոխանակվի արտասահմանյան
կենսական անհրաժեշտ պաշարեղենի հետ՝ պերճանքի առարկաների
փոփոխը։ Այսպիսով, աշխատավարձի մակարդակի ընդհանուր
բարձրացումը՝ չուկայական գների կարճառու տատանումից հետ-
առաջ կրերեր միայն շահույթի մակարդակի ընդհանուր իջեցում
առանց ապրանքների գների տեսական փոփոխության։

Եկեւ ինձ մատնանշեն, թե համաձայն նախորդ շարադրանքում
արածու յենթագրության աշխատավարձի փողջ աճը կծախովի ան-
հրաժեշտ գոյամիջոցների վրա, ապա յես կպատասխանեմ, վոր
յես արել եմ քաղաքացի Վեստոնի հայացքների համար ամենաբա-
րենպաստ յենթագրությունը։ Եկեւ աշխատավարձի աճը ծախսվեր
ոյն սուրկաների վրա, վորոնք սկզբում չեյին մտնում բանվորնե-
րի սպառման մեջ, ապա վոչ մի ապացույցի պետք չեր լինի բան-
վորների գնողական ուժի իրական մեծացման համար։ Իսկ քանի
վոր նրա մեծացումը այնուամենայնիվ առաջ և գալիս միայն աշ-
խատավարձի բարձրացումից, ապա բանվորների գնողական ուժի
այս մեծացումը պետք և ճշտորեն համապատասխանի կապիտա-
լիստների գնողական ուժի նվազման։ Այսպիսով, ապրանքների
ընդհանուր պահանջը չի մեծանա, այլ միայն կիփոխանեն այդ

պահանջի բազկացուցիչ տարրերը : Մի յերկրի մեծացող պահանջն իր հակակլիուր կդաներ մյուս յերկրի ընկնող պահանջի մեջ : Այսպիսով, ընդհանուր պահանջի անփոխի մնալու հետևանքով, ադրանքների շուկայական գների մեջ վոչ մի փոփոխություն չեր տռացնաւ :

Յեվ այսպես, ձեր ռուաջ դրված ե հետեւյալ ալտերնատիվը : Կամ աշխատավորձի աճը հավասարատչափ ծախսվում ե սպասման տարրեր առարկաների վրա . նման դեպքում բանվոր դասակարգի քաղաքական պահանջը պետք ե հավասարեցվի կապիտալիստների դասակարգի կրծատվող պահանջով, կամ աշխատավարձի աճը ժամանակում ե միայն միքանի առարկաների վրա, վորոնց շուկայական գները ժամանակ առ ժամանակ կրծարձրանան : Այն ժամանակ օրան հետեւյալ շահույթի մակարդակի բարձրացումն արդյունաբերության վորոշ ճյուղերում և վերջինիս հետեւանքով վրա զատնող շահույթի մակարդակի իջեցումը մյուս ճյուղերում՝ վախիսություն կառաջացնեն կապիտալի և աշխատանքի դորձադրման մեջ, վորոշ տեղի կունենա մինչև այն ժամանակ, յերբ արդյունաբերության մի ճյուղում առաջարկը կհասնի բարձրացած պահանջի բարձրության, իսկ արդյունաբերության մյուս ճյուղերում կկրթատվի պակասող պահանջի համապատասխան : Առաջին յենթադրության դեպքում ապրանքների գների մեջ վոչ մի փոփոխություն չի առաջանա : Իսկ յերկրորդ դեպքում՝ շուկայական գների միքանի տատանումներից հետո ապրանքի փոխանակային արժեքները կվերադառնան իրենց նախկին կացության : Յերկու դեպքում ել աշխատավարձի մակարդակի ընդհանուր բարձրացումը, վերջի վերջո, չի ունենա վոչ մի այլ հետեւանք, բացի շահույթի մակարդակի ընդհանուր անկումից :

Կամնատլով ներդորձել ձեր յերեակայության վրա, քաղաքացի վեստոնն առաջարկում ե մտածել այն դժվարությունների մասին, վորոնք կառաջացնեն գյուղական բանվորների աշխատավարձի քաղանուր բարձրացում՝ իննը շիլինդից մինչև տասնութեւ : Պատկերացրեք—գոչում ե նա—անհրաժեշտ գոյամիջոցների պահանջի չորսական բարձրացում և նրանց հետեւանքով առաջացած այդ մթերքների գների սարսափելի բարձրացում : Սակայն չե՞զոր դուք քոլորդ գիտեք, վոր ամերիկյան գյուղական բանվորների միջին աշխատավարձը յերկու անգամից ավելի բարձր և անգիտական դյուքսական բանվորների աշխատավարձից, թեև Միացյալ Նահանգներ

բաւմ գյուղատնտեսական մթերքների գներն ավելի ցածր են, քան Միացյալ Կայսրության մեջ, թեև Միացյալ Նահանգներում կապիտալի և աշխատանքի միջև իշխում ե միւնույն հարաբերականությունը, ինչ Անգլիայում, թեև տարեկան արտադրանքի մեծությունը Միացյալ Նահանգներում շատ ավելի քիչ է, քան Անգլիայում : Իսկ ինչո՞ւ յե մեր բարեկամը ահապանդ հնչեցնում : Պարզապես նրա համար, վոր խուսափի իր առաջ դրված հարցից : Աշխատավարձի հանկարծակի բարձրացումն իննը շիլինդից տառնութ շիլինդի՝ նշանակում ե նրա դումարի հանկարծակի բարձրացում հարցուր տոկոսով : Բայց մենք բնավ չենք քննել այն հարցը, թե կարո՞ղ ե Անգլիայում աշխատավարձի ընդհանուր մակարդակը հանկարծակի բարձրանալ հարյուր տոկոսով : Մենք ամենենի դործ չունենք մեծացման այն չափի հետ, վորը յուրաքանչյուր տոյիալ գեղագում կախված ե տվյալ հանգամանքներից և նրանց միջոցով ել սահմանվում ե : Մեզ պետք ե միայն պարզել, թե աշխատավարձի մակարդակի ընդհանուր բարձրացումն ի՞նչպիսի աղքացություն կուրծի նույնիսկ այն դեպքում, յեթե այդ բարձրացումը կազմի միայն մեկ տոկոս : Այս պատճառով յես մի կողմ եմ թողնում բարեկամ վեստոնի կողմից աշխատավարձի մակարդակի թողնումը բարձրացում և ձեր ուշադրություն եմ հրավիրում աշխատավարձի փաստական բարձրացման վրա, վորն իսկապես կատարվել և Մեծ Բրիտանիայում 1849—1859 թ. ընթացքում :

Դուք բոլորդ գիտեք տասժամյա, կամ ավելի շուտ, տասեկեսամյա որենքի մասին, վորը մուծված ե 1848 թվից : Նա ներկայացնում ե տնտեսական այն առավել նշանակալի փոփոխություններից մեկը, վորպիսին ապրել ենք մենք : Այդ աշխատավարձի հանկարծակի և հարկադրական բարձրացումն եր վոչ թե մեջամասին արհեստագործություններում, այլ արդյունաբերության դեկավար ճյուղերում, վորոնց միջոցով Անգլիան իշխում է համաշխարհային շուկայի վրա : Աշխատավարձի այս բարձրացումը կատարվեց հատկապես անբարենպաստ հանգամանքներում : Դոկտոր Յուրը, պրոֆեսոր Սենիորը և միջին դասակարգի մնացած բոլոր պաշտոնական տնտեսական մանկական կեներն «ապացուցում» եյին, — ե յես պետք ե ասեմ՝ շատ ավելի հիմնավոր կերպով, քան մեր բարեկամ վեստոնը, — վոր այդ բարձրացումը կլինի անգլիական արդյունաբերության կործանումը : Նրանք ապացուցում եյին, վոր ոյդ վոչ թե պարզապես աշխատավարձի բարձրացում ե, այ-

մի բարձրացում, վորը հիմնված ե գործադրվող աշխատանքի քանակի փոքրացման վրա: Նրանք պնդում եյին, վոր տասներկույթերդ ժամը, վոր խլեցին կապիտալիստից, իրոք հանդիսանում ե այն միակ ժամը, վորից կապիտալիստը քաղում ե իր շահույթը: Նրանք սպառնում եյին շրջանառության կրծատումով, զների բարձրացմամբ, շուկաների կորուստով, արտադրության կրծատումով և որան զուրակցող աշխատավարձի անկումով, մի խոսքով՝ վերջնական քայլացումով: Մաքսիմիլիան Ռոբեսպյերի որենքներն անհրաժեշտ գոյամիջոցների մաքսիմալ գների մասին նրանք համարում եյին բոլորովին դատարկ մի բան, համեմատած այդ որենքի հետ, և վորոշ իմաստով նրանք իրավացի եյին: Բայց իրականում վո՞րն ե յեղել այդ որենքի ազդեցությունը: Գործարանային բանագործների փողային աշխատավարձի բարձրացում՝ չնայած աշխատանքային որվա պակասեցման, գործարանային դրազված բանվորների թվի խիստ ավելացում, արտադրության պրոդուկտների գների մշտական անկում, աշխատանքի արտադրութականության ապահովացման, պարանքեալ վարդեսություն, գործարանային բանվորների թվի մշտական անկում, աշխատանքի արտադրութականության ապահովացման, պարանքեալ վարդեսություն, ապահովացման գանձերի չերքեթ չափացում, ապահովացման գանձերի չերքեթ չափացման գանձերի թվությամբ կոնդրեսում 1860 թ. Մանչեստրում յնս ինքս լսեցի, թե ինչպես պարոն Նյումանը (Newmann) խօսովանեց, վոր ինքը, դոկտոր Յուրը, Սենիորը և քաղաքատնտեսության բոլոր պաշտոնական ներկայացուցիչներն անիրավացի եյին, և իրավացի զուրս յեկավ ժողովրդի բնազդը: Յես նկատի ունեմ պարոն Վ. Նյումանին, և վոչ թե պրոֆեսոր Ֆրանսիս Նյումանին, վորովհետեւ նո ականավոր տեղ ե գրավում տնտեսագիտության մեջ՝ իրեն Թոմաս Տուկի «Գների պատմության»—այն սքանչելի գործի աշխատակից և հրատարակիչ, վոր հետազոտում ե զների պատմությունը 1793 թվից մինչև 1856 թիվը¹⁾: Յեթե ճիշտ լինելին մեր բարեկամ Վեստոնի անիոփոխ մտքերն աշխատավարձի անփոփոխ չափի, արտադրության անիոփոխ քանակի, աշխատանքի անփոփոխ արտադրողականության, կապիտալիստների հավերժական և անիոփոխ ցանկությունների և նրա մնացած բոլոր անփոփոխերու-

1) Պարզ ե, վոր Մարքոն այսուղ խօսում ե Վեյշամ Նյումարի մասին, վարդ նա ճիշտ կերպով մեջբեռում ե կատարում նաև էկապիտուրում: Ֆրանսիս Նյումանը հայտնի գիլիսով ե գործունյատ անտեսազետ կարդինալ Նյումանի յեղացըն ե:

թյունների և հավերժացումների մասին, ապա ճիշտ կլինելին պրոֆեսոր Սենիորի բոլոր տխուր գուշակությունները, և ճիշտ չերքեթ Ռուբերտ Ուուենը, վոր տակալիին 1816 թվին հայտարարեց, թե աշխատանքային որվա տեսողության ընդհանուր սահմանակակումն առաջին նախապատրաստական քայլն ե վեպի բանվորների աղատագործը և, հակառակ ընդհանուր նախապատրաման, իրագործեց այն Նյու-Լենարկի իր սեփական Փարբիկում, իր սեփական ուսուկով:

Տասժամյա աշխատանքային որվա որենքի մուծման և նրա հետեանքով աշխատավարձի բարձրացման ժամանակ Մեծ Բրիտանիայում, վորոշ պատճառներով, վորոնք այսուել թվելը տեղին չե, վրա հասավ գյուղական բանվորների աշխատավարձի ընդհանուր բարձրացում:

Զեղ մոլորության մեջ չգցելու համար յես միքանի սկզբնական դիտողություններ կանեմ, թեև իմ խսկական նպատակի համարդ այդ անելու հարկ չկա:

Յեթե մի մարդ անցյալում ստանում եր շաբաթական յերկու շիլինդ աշխատավարձ, և յեթե այն հետո բարձրանում ե մինչև շորս շիլինդ, ապա աշխատավարձի մակարդակը բարձրացման տեսակետից այս կանդիսանար իրը աչքի զարնող մի յերեսույթ, ասկայն, այսուամենայնիվ, աշխատավարձի փաստական դումարը՝ շաբաթական չորս շիլինդը կմնար վողորմելի մի զումար, վորով միայն կարելի յեր բավարարել քաղցը:

Այս պատճառով ել ճեղ մի գցեք մոլորության մեջ աշխատավարձի մակարդակի տոկոսային բարձրացման ճոխ թվերով: Մշտապես հարցը իրոք վո՞րքան ե յեղել աշխատավարձի սկզբնական դումարը:

Դուք կհասկանաք նույնպես, վոր յեթե տաս մարդ յուրաքանչյուրը շաբաթական ստանում ե յերկու շիլինդ, հինգ մարդ յուրաքանչյուրը շաբաթական ստանում ե հինգ շիլինդ և հինգ մարդ յուրաքանչյուրը շաբաթական ստանում ե տասնմեկ շիլինդ, ապա բոլոր քսան մարդն ել շաբաթական ստանում են հարցուր շիլինդ, կամ հինգ Փունտ տեսրլինդ, յեթե այնուհետև նրանց շաբաթական աշխատավարձի ընդհանուր գումարը բարձրանա, յենթարենք, քսան տոկոսով, ապա տեղի կունենա ավելացումն զնդից մինչև վեց Փունտ: Ընդունելով միջին մեծությունը, մենք կարող եյինք առել, վոր աշխատավարձի ընդհանուր մակարդակը բարձ-



բացալ քսանհինդ տոկոսով, մինչև իսկ յեթե իրականում տառ բանվորի աշխատավարձը (յերկու շիլինգի) մնար անփոփոխ, հինդ հոգուց մի խմբակի աշխատավարձը հինդ շիլինգից բարձրանար մինչև վեցի, և մյուս հինդ մարդու խմբակի աշխատավարձը բարձրանար տասնմեկից մինչև տասնհինդ շիլինգի: Բանվորների կես մասի վիճակը բոլորովին չեր լավանա, բանվորների քառորդ մասի վիճակը կլավանար աննշան չափով և բանվորների ամբողջ թվի միայն մեկ չորրորդ մասի վիճակն իսկապես կլավանար: Այնուամենայնիվ, միջին հաշվով, այս քսան մարդու աշխատավարձը գումարը կրարձրանար քսանհինդ տոկոսով, իսկ ինչ վերաբերում է կապիտալին, վորը նրանց աշխատանք և տալիս, և այն ապրանքների գներին, վոր նրանք արտադրում են, ապա նրանք ճիշտ այնպես կլինեն, ինչպես յեթե այս քսան մարդը համասարաշափ մասնակցելին աշխատավարձի միջին մակարդակի բարձրացմանը: Գյուղական բանվորների աշխատավարձի բարձրացումը, վորոնց նորմալ աշխատավարձն Անգլիայի և Շոտլանդիայի տարրեր դժուդժուններում տարրեր եր, կատարվում եր չափ անհամաչափ:

Վերջապես, այն ժամանակ, յերբ տեղի յեր ունենում աշխատավարձի բարձրացում, նկատվում էլին հակառակ ուղղությամբ դործող յերեւոյթներ, ինչպես, որինակ, Ռուսաստանի հետ պատերազմելու¹⁾ հետևանքով մուծված նոր հարկերը, գյուղական բանվորների բնակարանների մասսայական խորտակումը և այլն:

Սկզբնական այս ընդարձակ դիտողությունից հետո յես հայտարարում եմ, վոր 1849-ից մինչև 1859 թիվը տեղի ունեցալ Մեծ Բրիտանիայի դյուլական բանվորների աշխատավարձի միջին մակարդակի բարձրացում քառասուն տոկոսով: Յես կարող ելի մեջ բնիք չափ փաստեր վորաբես ապացույց իմ հայտարարության, սակայն իմ ներկա նպատակի համար յես բավական եմ համարում կանդ առնել բարեխիղ և քննադատական մի ռեֆերատի վրա՝ «Գյուղատնտեսության մեջ դործող ուժերը» վերնադում, վոր կարդացել և հանդուցյալ Զոն Ս. Մորտոնը 1860 թ., արվեստի ընդունյան ընկերության նիստում: Պ. Մորտոնը տվել է հաշվետվություններ և ուրիշ հավասար փաստաթղթերի մի սերիա, վոր

Հավաքել ե մոտ հարյուր դյուղական անտեսություններից՝ Շոտլանդական 12 և անդիւական 35 դքսություններում:

Մեր բարեկամ Վեստոնի կարծիքով գործարանային բանվորների աշխատավարձի միանվագ բարձրացման հետևանքով 1849—1859 թ. թ. ընթացքում պետք ե վրա հասներ դյուղատնտեսական մթերքների զների սարսափելի բարձրացում: Բայց իրականում ի՞նչ տեղի ունեցալ: Զնայած ուսւական պատերազմին և 1854—1856 թվերի մի շարք անբերը իուններին, ցորենի՝ Անգլիայի դյուղատնտեսության այդ գլխավոր արտադրանքի միջին գինը 1838—1848 թ. թ. յուրաքանչյուր կլարտերին յերեք ֆնտից իջավ մինչև յուրաքանչյուր կվարտերին յերկու ֆունտ տաս վավերագի 1849—1859 թ. թ.:

Այս կազմում ե ցորենի զների իջեցում ավելի, քան տասնվեց տոկոսով և զուգագիպում և գյուղական բանվորների աշխատավարձի միջին հաշվով քառասուն տոկոս բարձրացման: Յեթե մենք այս շրջանի վերջը համեմատենք նրա սկզբի հետ, 1849 թվից մինչև 1859 թ., ապա կտեսնենք, վոր պաշտոնապես ցուցակագրված աղքատների թիվը 934·419-ից իջել է մինչև 860·470 մարդ՝ պակասել ե 73·943 մարդով, վորը շատ աննշան պակասումն է, և այն ել անհետանում է հենց հաջորդ տարիներին, բայց, խոստովանում եմ, համենայն գեպս պակասումն է:

Ինձ կարող են տեսլ, վոր հացի որենքների վերացման հետևանքով 1849—1859 թ. թ. արտասահմանյան հացի ներմուծումն ավելացել է 1838—1848 թ. թ. համեմատությամբ: Բայց ի՞նչ ե հետևում սրանց: Քաղաքացի Վեստոնի տեսակետով, պետք եր սպասել, վոր արտասահմանյան չուկաների հանդեպ այդքան հանկարծակի, հոկայական և հարաճուն ուղանջն այնտեղ կառաջներ դյուղատնտեսական մթերքների զների սարսափելի աստիճանի բարձրացումն, քանի վոր մեծացող պահանջի ներդործությունը մնում է անփոխիխ, անկախ այն բանից, թե այդ առաջ ե զալիս յերկրի ներսում, թե դրսում: Ի՞նչ տեղի ունեցալ իրականում: Բայց տառությամբ միքանի անբերը տարիների, ամբողջ այս շրջանի ընթացքում միանալիք անվերջ գանգատներ ելին խուման հացի գների քայլայիչ անկման մասին: Ամերիկացիները բաղմից ստիպված են յեղել այրել իրենց մթերքների ավելցուկը, և Ռուսաստանը, յեթե հավատանք պարոն Ռուրկվարտին (Արքսահարտ), քաղաքացիական պատերազմ հրահրեց Միացյալ Նահանգներում, վարով

¹⁾ Մարքսն այստեղ նկատի ունի 1855—1856 թ. Դրիմի պատերազմը:

Հետեւ յանկիների մըցությունը խափանում եր նրա գյուղատնտեսական մթերքների արտահանումը դեպի յելքոպական շուկաները։ Քաղաքացի Վեստոնի արսարակա ձեռվ պարուրված փաստաբեկումը հանդում ե հետեւյալին։ պահանջի բարձրացումն առաջանում ե արտադրանքի անփոխի քանակի դեպքում, վորի հետևանքով հետարարվոր չե ավելացնել պահանջվող առարկաների առաջարկը, այլ միայն կարելի յե բարձրացնել նրանց փողային գինը։ Սակայն ամենորյա դիտումը ցույց ե տալիս, վոր վորոշ դեպքերում աճող պահանջն ապրանքների շուկայական գները թողնում ե բոլորովին անփոխի, իսկ մյուս դեպքերում առաջացնում ե գների բարձրացում, վորին հետեւում ե մեծացող առաջարկը, վոր գներն իջեցնում ե մինչեւ սկզբնական, իսկ շատ դեպքերում նույնիսկ ավելի ցածր մակարդակի։ Արդյոք պահանջի մեծացումն առաջ ե դալիս աշխատավարձի մեծացումից, թե ինչ-վոր ուրիշ պատճառից, հասկանալի յե, բոլորովին չի փոխում գործը։ Քաղաքացի վեստոնի տեսակետով, նույնքան դժվար ե բացատրել այս հանրահայտնի փաստերը, ինչպես և աշխատավարձի բացառիկ հանդամանքներում նկատող բարձրացումը։ Այս պատճառով, նրա փառարկումը վճռապես վոչ մի նշանակություն չունի մեզ հետաքրքրող հարցի համար։ Յերբ անհրաժեշտ ե բացատրել այն որենքները, վորոնց հիման վրա մեծացող պահանջը ստեղծում ե մեծացած առաջարկ, և վոչ թե ապրանքների շուկայական գների բարձրացում, նա յերևան ե հանում իր անկարությունը։

ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ՅԵՎ ՓՈՂ

Վեճի յերկրորդ որը մեր բարեկամ վեստոնն իր հին պնդումներին ավելց նոր ձե։ Նա ասում եր. յեթե տեղի յե ունենում դրամական աշխատավարձի ընդհանուր բարձրացում, ապա ավելի շատ առկա փող ե պետք, վորպեսզի նրանով աշխատավարձ վճարվի, բայց քանի վոր առկա փողերի քանակը վորոշ ե, ապա ի՞նչպես կարելի յե այս վորոշակե քանակի առկա փողերով ծածկել փողային աշխատավարձի մեծացած գումարը։ Սկզբում գժվարությունն առաջանում եր նրանից, վոր, չնայած բանվորի փողային վճարի աճման, ապրանքների այն քանակը, վոր ընկնում ե նրան վորպես բաժին, մնում եր անփոխի. այժմ այդ առաջ ե դալիս նրանից, վոր, չնայած ապրանքների քանակի անփոխի լինելուն, փողային աշխատավարձը բարձրանում ե։ Ինքնին հասկանալի յե, վոր այս

վերջին դժվարությունը պետք ե անհետանա, հենց վոր հերքի սկզբնական դոզման։ Բայց այնուամենայնիվ յես ցույց կտամ, վոր առկա փողերի այս հարցը վճռապես վոչինչ ընդհանուր չունի մեղ Հետաքրքրող առարկայի հետ։

Զեր յերկրում վճարման սիստեմը (Zahlungsapparat) դարդացել և շատ ավելի յե կատարելազործվել, քան Յելքոպայի մյուս յերկրներում։ Շնորհիվ բանկային գործի ընդարձակման ու կոնյենտրացիայի, այստեղ պահանջվում է ավելի քիչ առկա փող, քան վորեե ուրիշ յերկրում, վորպեսզի հնարավորություն տրվի արժեքների միեւույն գումարին շրջանավելու և շատ ավելի նշանակելի գործարքներ կատարելու։ Այսպես, որինակ, աշխատավարձի տեսակետից անդիւական գործարանային բանվորը յուրաքանչյուր շաբաթի իր աշխատավարձը տալիս ե խանութպանին, վորն ամեն շաբաթ փողն ուղարկում ե բանկիրին, իսկ բանկիրն իր հերթին ամեն շաբաթ այդ փողով վարկավորում ե գործարանատերոջ, վորը կրկին այդ վճարում ե իր բանվորներին և այլն։ Շնորհիվ այսպիսի մեխանիզմի հնարավոր ե, վոր բանվորի տարեկան աշխատավարձը, դիցուք՝ հիսուն յերկու ֆունտ ստերլինգ, հասուցվի միայն մեկ սովերենով¹⁾, վորը յուրաքանչյուր շաբաթ պետք ե շրջի միենույն վոլորտում։ Սակայն Անդիւայում այդ սիստեմը պակաս կատարելազործված ե, քան Շոտլանդիայում, այն նույնպես ամենուրեք չե, վոր կատարելազործված ե միատեսակ կերպով, և այս պատճառով մենքնկատում ենք, որինակ, վոր միքանի գյուղական գավառներում, համեմատած գործարանային դավանների հետ, արժեքների շատ ավելի պակաս մտսայի շրջանառության համար գործածվում ե ավելի շատ առկա փող։

Զրանցքի մյուս կողմում դուք կդանեք, վոր փողային աշխատավարձն այնտեղ ավելի ցածր ե, քան Անդիւայում, բայց վոր Գերմանիայում, Իտալիայում, Շվեյցարիայում և Ֆրանսիայում նրա հատուցումը պահանջում է առկա փողերի ավելի մեծ քանակության շրջանառություն։ Միևնույն սովերենն այնքան ել հեշտ չի վորսկում բանկիրի կողմից կամ վերադառնում արդյունաբերող կապիտալիստին, և սրա համար ել պահանջվում ե գուցե և յերեք սովերենն, վորպեսզի հնարավորություն տրվի տարեկան քսան և

¹⁾) Սովերեն կամ մեկ ֆունտ ստերլինգ՝ անգլիական դրամական միավոր։

Հինդ Փունտ աշխատավարձին շրջանառութելու, փոխանակ մեկ սովերենի, վորն Անդլիայում ծառայում ե տարեկան հսկուն յերկու Փունտ ստերլինգ աշխատավարձի շրջանառության համար։ Այսպիսով, յեթե դուք ցամաքային յերկիրները համեմատեք Անդլիայի հետ, անմիջապես կնկատեք, վոր փողային աշխատավարձի ցածր չափերն իրենց շրջանառության համար կարող են պահանջել առկա փողերի չափ ավելի մեծ դումար, քան բարձր չափերը, և վոր իրականության մեջ այս կախված ե զուտ տեխնիկական պայմաններից, վորը մեր հետազոտության սահմաններից դուրս ե։

Լավագույն հաշվարկումների համաձայն, վորոնք միայն ինձ հայտնի յեն, Անդլիայի բանվոր դասակարգի տարեկան յեկամուտը կարող ե վորոշել 250 միլիոն Փունտի սահմաններում։ Այս հսկայական դումարը հատուցվում է մոտավորապես յերեք միլիոն դումարի շրջանառության միջոցով։ Յենթադրենք, թե աշխատավարձը բարձրանում է 50 %-ով։ Այս գեղագում յերեք միլիոն առկա փողի փոխարեն կապահանջմի 4 և կես միլիոն։ Քանի վոր բանվորի ամենորյա ծախսերի նշանակելի մասը վճարվում է արծաթով և պղնձով, այսինքն՝ հասարակ հնչուն դրամանիշներով, վորոնց արժեքը վոսկու համեմատությամբ սահմանվում է քմահաճ կերպով, որենքով, ճիշտ այնպես, ինչպես և մեծարժեք թղթադրամների արժեքը, ապա փողային աշխատավարձի բարձրացումը 50 տոկոսով ծայրահեղ դեմքում կտահանջեր շրջանառության մեծացում դիցուք մեկ միլիոն սովերենով։ Այն միլիոնը, վոր այժմ հսկած կամ չհատված վոսկու ձևով ընկած է անդլիական բանկի նկուղներում, մտնելու յեր շրջանառության մեջ։ Անդամ այն աննշան ծախսերը, վոր կառաջանային հասումից և այդ լրացուցիչ միլիոնի կորուսուց կը ուժ մեջ, կարող են խնայել, և նրանք խսկապես խնայվում են այն դեպքերում, յերբ առկա փողի քանակության մեծացման պահանջն առաջ և բերում վորեւ գժվարություն։ Զեղանից յուրաքանչյուրը դիտե, վոր այս յերկը շրջանառության միջոցները բաժանվում են յերկու մեծ խմբի. սրանցից մեկը կազմված է ամենատարբեր բանկային տոմսերի նմուշներից և գործադրվում է խոչոր առևտրականների կողմից իրենց գործերում և մեծ վճարումների գեպքում սպասողների և առևտրականների միջև, իսկ շրջանառության միջոցի մյուս ճնշը, վորը կազմված է մետաղյա դրամներից, շրջանառություն և կատարում մանր առևտրի մեջ։ Զնայած տարբեր Փունկցիաներին, այդ յերկու տեսակի շրջանառությունը միջոցները փոխարինում են միմյանց։

այս, որինակ, նույնիսկ մեծ վճարումների գեպքում հինգ Փունտ ստերլինգից ցածր բոլոր գումարները վճարվում են վոսկե դրամով։ Յեթե վաղը շրջանառության մեջ յերեան դան չորս, յերեք կամ յերկու ֆնտանոց բանկային տոմսեր, ապա վոսկին, վորը լցնում է շրջանառության այդ խողովակները, անմիջապես դուրս կմղին նշանցից և կցվի այն խողովակները, վորտեղ նա պետք ե դուրս ածվի բարձրացած փողային աշխատավարձի շրջանառության համար։ Այսպիսով, նոր միլիոնը, վորն անհրաժեշտ յեղակ աշխատավարձի 50 տոկոսային բարձրացման հետեանքով, առաջ ե ներկայացվի թեկուզ և առանց վորեւ մեկ սովերեն ալիքացման։ Միևնույն արդյունքին կարելի յեր հասնել առանց բանկային տոմսերի քանակի մեծացման, յեթե մեծանար չեկերի շրջանառությունը—ինչպես այդ բավական յերկար ժամանակ նկատվում եր լանքաշիրում։

Յեթե աշխատավարձի ընդհանուր բարձրացումը 50 տոկոսով, ինչպես այդ յենթադրում եր քաղաքացի վեստոնը գյուղական բանկորների աշխատավարձի համար, առաջացներ գոյամիջոցների գների խիստ բարձրացում և, նրա ուսմունքի համաձայն, անհրաժեշտ գարձներ նոր առկա փողերի ներդրավում, մի բան, վորն անիրազործելի յե, ապա աշխատավարձի ընդհանուր անկումը պետք ե առաջացներ ճիշտ այնպիսի ներգործություն և ճիշտ նույն աստիճանի, բայց միայն հակադիր ուղղությամբ։ Դուք բոլոր գիտեք, վոր 1858 թ. մինչեւ 1860 թվականները բամբակեղեն մասությականությամբ արդյունաբերության համար վերին աստիճանի նպաստավոր տարբեներ եյին, և վոր հատկապես 1860 թվականն այս տեսակետից իրեն հավասարը չունի արդյունաբերություն տարեգրության մեջ, ընդվորում արդյունաբերության մյուս ճյուղերը նույնպես այն ժոմանակ միասնական ծաղկում եյին։ Բամբակեղենի և մյուս բոլոր, նրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի բանկորների աշխատավարձը 1860 թ. ավելի բարձր եր, քան յերբեկցից դժունից առաջ ավելի բանկային կրիցիսը, և աշխատավարձը արտադրությունների մեջ հանկարծակի իջավ իր նախկին բոլոր արտադրությունների մեջ հանկարծակի իջավի իր նախկին չափի քառորդին։ Սա բարձրացում եր հակադիր ուղղությամբ չորս հարյուր տոկոսով։ Յեթե աշխատավարձը բարձրանում է հինգ մինչեւ քսան, ապա մենք ասում ենք, վոր այն բարձրանում է չորս հարյուր տոկոսով, իսկ յեթե ընկնում է քսանից մինչեւ հինգ, մենք ասում ենք, վոր այն ընկնում է 75 տոկոսով։ Բայց չե՞ վոր

գումարը մեկ բարձրացման և մեկ իջնցման դեպքում լինելու յէ միենույն տասնհինդ շիլինդը։ Այսպիսով, այս աշխատավարձի մակարդակի հանկարծակի փոփոխություն եր, վորի նմանն անցյալում յերեք չեր պատահել, և այն տարածեց բանվորների այնպիսի քանակության վրա, վորը յերկու անդամ բարձր եր գյուղական բանվորների թվից, յեթե, իհարկե, մենք հաշվի առնենք վոչ միայն բամբակեղենի արդյունաբերության մեջ զբաղված բանվորներին, այլև միաժամանակ նրանից անուղղակի կախում ունեցողներին։ Բայց սրա հետևանքով ընկա՞լ հացահատիկի դինը։ Համեմատած տարեկան միջին դինի հետ, այն յերեք տարվա ժամանակաշրջանում՝ 1858-ից մինչև 1860 թվերը յուրաքանչյուր կվարաերին բարձրացավ 47 շիլինդ և 8 պենսից մինչև յուրաքանչյուր կվարտերին յերեք տարվա՝ 1860—1863 թ. թ. տարեկան միջին դինին՝ 55 շիլինդ և 10 պենսի։ Ինչ վերաբերում է շրջանառության մեջ գտնվող առկա փողերի քանակին, ապա 1861 թվին հատված է յեղել 8,673,232 ֆունտ դրամ ընդդեմ 1860 թ. 3,378,702 ֆունտի։ Սյունակում է, վոր 1861 թ. 5,295,130 ֆունտ դրամ ալելի յետառված, քան 1860 թ.՝ ծիչուն, 1861 թ. բանկային տոմսերի շրջանառությունը 1,319,000 ֆունտով քիչ եր, քան 1860 թվին։ Հանեք այս գումարը, և համենայն դեպք, 1861 թ. համար, համեմատած 1860 նպաստավոր տարվա հետ, մնում է ալելցուկ գումար 3,976,130 ֆունտ, այսինքն՝ մոտ չորս միլիոն, իսկ այս ժամանակի ընթացքում անդլիական բանկի վոսկու պաշարները նվազեցին յեթե վոչ միևնույն, ապա մոտավորապես նույն հարթերությամբ։

Համեմատենք 1842 և 1862 տարիները։ Ուշադրության չառնելով շրջանառության մեջ գտնվող ապրանքների քանակի և արժեքների վիթիարի աճումը, միայն ակցիաների և յերկաթզծի փոխառությունների նոր գումարների կապիտալը 1862 թ. Անդիայում և Ռւելսում հասնում եր մինչև 320·000·000 ֆունտի, մի գումար, վորը (1842 կիթիար հեքիաթյին։ Այս բոլորով հանդերձ, շրջանառության մեջ գտնվող առկա փողի գումարը 1842 և 1862 թվերին միենույն մեծությունն ուներ։ Ընդհանրապես, հակառակ վոչ միայն ապրանքների մասսայի, այլ և հատկապես փողային գործարքների արժեքի հոկայական մեծացման, գուք կինկատեք շրջանառության մեջ գործող փողի քանակի պրոդրեսիվ նվազման տենդենց։ Մեր բարեկամ վեստոնի տեսակետով, սա թվում է անլուծելի հանելուկ։

Յեթե նա ալելի խորը թափանցեր գործի մեջ, ապա կդառներ, վոր շրջանառության մեջ գտնվող ապրանքների քանակն ու արժեքը և կնքված փողային գործարքների արժեքը, բոլորովին անկախ աշխատավարձից և նույնիսկ այն դեպքում, յերբ վերջինս անփոփոխ է մնում—ամեն որ փոփոխվում էն, վոր տրված բանկնությունների գումարն ամեն որ փոփոխվում է, վոր առանց փողի ոգնության մուրհակների, չեկերի, առեւրական գըքերի վարկերով, հաշվարկային բանկերով իրացվող վճարումներն ամեն որ փոփոխվում են, վոր վորքանով իրական մետաղյա դրամներ են պահանջվում, չըջանառություն գործող փողի քանակի և պահեստի կամ բանկերի նկողներում պահված փողի քանակի և ձուլածո վոսկի ների հարաբերությունն ամեն որ փոփոխվում է։ Վոր մետաղյա դրամների գումարը, վորոնք անհրաժեշտ են յերկրի ներսում շրջանառություն կատարելու համար և վորոնք ուղարկված են արտասահման միջազգային շրջանառության համար, ամեն որ փոփոխվում են։ Նա կդառներ, վոր շրջանառով փողի անփոփոխ գումարի նկատմամբ սիսակ և խիստ հակասության մեջ և դտնվում ամենորյա իրականության հետ։ Փոխանակ այն բանի, վոր ինչպես նա այժմ անում է՝ փողային շրջանառության որենքները չհասկանալուց փաստարկում ստեղծելու աշխատավարձի բարձրացման դեմ, նա պետք է ուսումնասիրեր այն որենքները, վորոնք ստիպում են փողի արժեքին գործադրվելու այնքան փոփոխիկ պայմանների համեմատ։

Ա.Ռ.Զ.Ջ.ՐԿ ՅԵՎ. Պ.Ա.Հ.Ա.Ն.Զ

Մեր բարեկամ Վեստոնն, ակնհայտ է, վոր լավ է յուրացըել բատինական այն առածը, թե՝ «կրկնությունն ուսման մայրն է» (crepetatio est mater studiorum)։ Կայս պատճառով նա իր սկզբնական գողման կրկնում է նոր ձեռվ, ասելով, վոր աշխատավարձի բարձրացմամբ առաջ յեկած փողային շրջանառության կրծառումը իր հետեւց բերում է կապիտալի նվազում և այլն։ Յերբ յես ժիսեցի առկա փողերի թերորիայից նրա վկայակոչությունները, նրանից հետո յես բոլորովին ավելորդ եմ համարում կանգ առնել այն յերեակայական հետեանքների վրա, վորոնք, ինչպես նա կարծում ե, պետք է առաջանան նրա յերեակայած դրամական կատարովից։ Ավելի լավ է, վոր յետ ուղղուկի կանգ առնեմ նրա այն

գողմայի վրա, վորը նա կրկնում ե տարբեր ձևերով, և վերցնեմ
այն իր ամենապարզ տեսական ֆորմուլայով:

Բավական ե մի դիտողություն, վորակեղի անմիջապես աշքի
գարնի նրա վոչ քննադատական վերաբերմունքը դեպի առարկան:
Նա զինվում ե ընդդեմ աշխատավարձի բարձրացման, կամ նրա
բարձր մակարդակի, վորպես նրա անցյալի բարձրացման ար-
դյունք: Սակայն յես հարցնում եմ նրան. ի՞նչ բան է բարձր և ի՞նչ՝
ցածր աշխատավարձը: Ի՞նչու, որինակ, շարաթական հինգ շիլ-
լինգը կաղմում ե ցածր, իսկ շարաթական քսան շիլինգը բարձր
աշխատավարձ: Յէթե հինգը քսանի համեմատությամբ ցածր վարձ
ե, ապա քսանը հարյուր շիլինգի համեմատությամբ ավելի ցածր
կլինի: Յէթե վորեե մեկը պետք ե դասախոսություններ կարդա-
ծերմաշավիների մասին և սկսի շատախոսել բարձր և ցածր տեմ-
պերատուրայի մասին, ապա նա դրանով վոչ վոքի չի հարստացնի
գիտելիքներով: Ամենից առաջ նա պետք ե ասի, թե ինչպես են վո-
րոշվում սառման և յեռման կետերը, այսինքն՝ ինչպես են վորոշ-
վում այս հիմնական կետերը բնական որենքներով, և վոչ թե զեր-
ժաշակի վաճառողների կամ պատրաստողների Փանտազիայով: Աշ-
խատավարձի և շահութի վերաբերյալ քաղաքացի Վեստոնը վոչ
միայն մոռացել և բերել տնտեսական որենքների այսպիսի զե-
կալար կետեր, այլ նույնիսկ նա ավելորդ և համարել վնտեր այդ
որենքները: Նա բավականացել է նրանով, վոր վերցրել ե բոլորից
ընդունված պատկերացումը բարձրի և ցածրի մասին, վորպես խիստ
վորոշակի նշանակություն ունեցող մի բան, թեև ակնհայտ ե, վոր
աշխատավարձը բարձր կամ ցածր կարելի յե անվանել միայն
համեմատելով այն նրա մեծությունը չափող վորեե նորմալ
չափի հետ:

Նա ի վիճակի չե ինձ ասելու, թե ինչու վորոշ քանակի աշխա-
տանքին տալիս են վորոշ քանակով փող: Յէթե նա պատասխաներ,
վոր այդ կարգավորվում ե առաջարկի և պահանջի որենքով, ապա
յես կհարցնելի նրան. ի՞նչպիսի որենքով ե կարգավորվում առա-
ջարկն ու պահանջը: Նման առարկությունից հետո նա պետք ե
թողներ կովի դաշտը: Բանվորական ուժի առաջարկի և պահանջի
հարաբերակցությունը, նրանց հետ միասին նաև բանվորական ուժի
շուկայական գները յենթարկվում են մշտական փոփխության:
Յէթե պահանջը գերազանցում ե առաջարկին, ապա աշխատավար-
ձը բարձրանում ե, յեթե առաջարկն ե գերազանցում պահանջին,
այն իշնում ե—թեկուղ և առաջարկի ու պահանջի միջև իսկակառ

Հարաբերությունն հաստատելու համար պետք լիներ դիմել բա-
նակուի կամ նման ուրիշ յեղանակի: Քանի վոր դուք առաջարկն
ու պահանջն ընդունում եք իրեւ մի որենք, վորը կարգավորում ե
աշխատավարձը, ապա նույնքան յերեխայական կլիներ, ինչպես
և անոգուտ, վիճել աշխատավարձի բարձրացման դեմ այն պատ-
ճառով, վոր համաձայն ձեր ընդունած որենքի աշխատավարձի
պարբերական բարձրացումն այնքան անհրաժեշտ ե և բնական,
ինչպես և նրա պարբերական անկումը: Յեթե դուք պահանջն ու
առաջարկը չեք ընդունում իրեւ աշխատավարձը կարգավորող մի
որենք, ապա յես կրկնում եմ իմ հարցը՝ իսկ ինչու վորոշակի
քանակի աշխատանքին տալիս են վորոշակի քանակով փող:

Բայց յեթե դործին նայենք համայնապարփակ տեսակետից,
ապա դուք, իհարկե, շատ կոխալվեք, յեթե ընդունեք, վոր բանվո-
րական ուժի կամ վորեե այլ ապրանքի արժեքը վերջնականապես
վորոշվում ե պահանջով և առաջարկով: Պահանջն ու առաջարկը
կարգավորում են շուկայական գների սոսկ ժամանակալոր տա-
տանումները: Նրանցով դուք կարող եք բացատրել, թե ինչու
ապրանքի շուկայական գները նրա արժեքից բարձրանում ե կամ
իջնում, բայց դուք յերբեք նրանցով չեք բացատրի ինքը՝ արժեքը:
Յենթարկեք, թե պահանջն ու առաջարկը գոնվում են հավասա-
րակշուռության մեջ, կամ ինչպես արտահայտվում են տնտեսագետ-
ները, նրանք միմյանց ծածկում են: Հենց այն մոմենտին, յերբ
այս փոխադարձ հակասող ուժերը համասար են դառնում, նրանք
փոխադարձարար մեկը մյուսին վոչնչացնում են և դադարում են
այս կամ այն ուղղությամբ զործելուց: Յերբ պահանջն ու ա-
ռաջարկը հավասարակշուռության մեջ են գտնվում և այս պատ-
ճառով ընդհատում են իրենց գործողությունը, ապրանքի շու-
կայական գները համապատասխանում ե նրա իրական արժեքին,
նրա նորմալ գնին, վորի շուրջը տատանվում են նրա շուկայական
գները: Այս պատճառով արժեքի բնության հետագատության դեպ-
քում մեղ հարկ չկա գիտելու, թե ինչպես պահանջն ու առաջարկը
ժամանակավորապես աղղում են շուկայական գների վրա: Միե-
նույնը պետք ե ասել նաև աշխատավարձի և մյուս բոլոր ապրանք-
ների գների մասին:

Մեր բարեկամի բոլոր փաստարկումները վերածելով պարզ թերիական ֆորմովայի, ստացվում է հետեւյալ դոկտան. «ապրանքների գները վորոշվում և կարգավորվում են աշխատավարձով»:

Ես կարող եյի հիմնվել իրական կյանքի դիտողության վրա, բերելով այն վորակես ապացույց ընդդեմ այս հնացած մոլորության: Յես կարող եյի ճամփանչել, վոր անդլիական դործարանային, հանջային բանվորները, նաև աշխատարները և այլն, վորոնց արդիում ե ճամփանատարար բարձր աշխատավարձ, իրենց արտադրանքների եժանությամբ համարյա գերազանցել են մնացած բոլոր յերկիրներին, մինչեւ, որինակ, անդլիական գյուղական բանվորները, վորոնց վճարվում ե ճամփանատարար ցածր աշխատավարձ, իրենց արտադրանքի թանգությամբ հետ են մնում մնացած բոլոր յերկիրներից: Միենույն յերկի, ինչպես նաև տարբեր յերկիրների տարբեր ապրանքները համեմատելով, յես կարող եյի ձեզ ապացուցել, վոր, բացառյալ միքանի, ավելի չուտ թվացող, քան իրական բացառություն, ցածր վարձատրվող աշխատանքն արտադրում ե միջին հաշվով թանդ տպրանքներ, իսկ թանդ վարձարվող աշխատանքը՝ եման ապրանքներ: Իհարկե, այս դեռ չի ապացուցում, վոր բանվորական ուժի բարձր գինը մի դեպքում ե նրա ցածր դինը մյուս դեպքում հանդիսանում են տրամադրուեալ հակառիր արդյունքների պատճառը, բայց համենայն դեպք այս ապացուցում ե, վոր ապրանքների դները չեն վորոշվում աշխատավարձով: Սակայն մենք բոլորովին հարկ չենք զգում դիմելու այս և մի պիրիկ մեթոդին:

Մեղ կարող են առարկել, թե քաղաքացի վեստոնը չի առաջդրել այն դոկտան, թե «ապրանքների գները վորոշվում են աշխատավարձով»: Իսկապես, նա վոչ մի անդամ այլպես չի ձեւկերպել: Ընդհակառակը, նա ասում եր, վոր շահույթն ու ոենտան նույնպես ապրանքների դների բազկացուցիչ մասերն են հանդիսանում, վորովհետև ապրանքային դները հանդիսանում են այն աղբյուրը, վորից պետք ե վճարվեն վոչ միայն բանվորների վարձը, այլ նաև կապիտալիստի շահույթը և հողատիրոջ ոենտան: Բայց, նրա կարծիքով, ի՞նչպես են կազմվում դները: Ամենից առաջ՝ աշխատավարձից: Այնուհետեւ—ավելացվում ե վորոշակի տոկոս կապիտալիստների և այնուհետև վորոշակի տո-

կոս հողատիրերի համար: Յենթաղրենք՝ վորեւ աշխատավարձը կատարելու դեպքում աշխատավարձը հավասար ե տաս միւնքարելու ավելքում աշխատավարձը հավասար արժեքի մակարդակը կազմում ե ավորի: Յեթե հավելայալ արժեքի մակարդակը կազմում է ավագայուր տոկոս, ապա կապիտալիստը, մճարելով աշխատավարձը, նրան կավելացնի նորից տաս միավոր, և յեթե հոգային ոենտան նույնպես կազմում ե աշխատավարձի մակարդակի հարցուր տոկոսը, ապա կավելացվի նորից տաս միավոր և ապրանքի ընդհանուր գինը կատար միավորի: Բայց վոր և ապրանքի ընդհանուր գինը կատար միավորի: Յեթե վերև բերված դեպքում աշխատավարձը բարձրանար մինչեւ քասնի, ապա ապրանքների գինը կբարձրանար բարձրանար մինչեւ քասնի, ապա շահույթն ու հողային ոենտան դիտում եյին վորպես լոկ տոկոսային հավելաւմներ աշխատավարձի վրա: Իհարկե, նրանցից և վոչ վոք չեր կարող այս տոկոսային հավելումների սահմանները հանդեցնել վորեւ տնտեսական որենքի: Ընդհակառակը, նրանք շատ յերկույթին հավատում են, վոր շահույթը վորոշվում ե տրամադրյայով, սովորության համեմատ, կապիտալիստների ցանկությամբ, կամ թե վորեւ ուրիշ՝ նույնքան ինքնակամ և անհասկանալի յեղանակով: Յեթե նրանք հաստատում են, վոր շահույթը կարգավորվում ե կապիտալիստների մրցությամբ, ապա այս բոլորին վոչինչ չի բացատրում: Մրցությունն անխուսափելիորեն շահույթին վոչինչ չի բացատրում և շահույթի տարբեր մակարդակներն արդյունաբերության տարբեր ճյուղերում, կամ նրանց բերում ե մեկ միջին մեծության, բայց այն յերբեք չի կարող վորոշել վոչ այդ մեծությունը, վոչ ել շահույթի ընդհանուր մակարդակը:

Ի՞նչ ենք հասկանում մենք, յերբ ասում ենք՝ «ապրանքների դները վորոշվում են աշխատավարձով»: Բանի վոր աշխատավարձը լոկ բանվորական ուժի գինի անվանումն ե, ապա մենք սրանով ասում ենք, վոր ապրանքների դները կարգավորվում են բանվորական ուժի գիներով: Բանի վոր «գինը» փոխանակային արժեքի երբ այստեղ յերբ այստեղ յես խոսում եմ արժեքի մասին, ապա միշտ նկատի առաջարկելու արժեքը, հատկապես փողով արտահայտած փոխանակային արժեքը, ապա այդ կոսքերն արտահայտած փոխանակային արժեքը, ապա այդ կոսքերն արտահայտած մեջ հատեյալը. «ապրանքների արժեքը վորոշվում ե բանվորական

ուժի արժեքով», կամ «բանվորական ուժի արժեքը արժեքների բնդիանուր չափանիշն ե»:

Բայց ինչո՞վ ե վորոշվում տվյալ դեպքում բանվորական ուժի արժեքն ինքը: Մենք այսուեղ հասանք այն կետին, վորից այն կողմը գնալ չի կարելի: Իհարկե, այն դեպքում միայն, յեթե դատենք արամաբանորեն: Սակայն, այս վարդապետության պաշտպաններն ամբան ել շատ ուշագրություն չեն դարձնում լողիկային: Վերցըք, որինակ, մեր բարեկամ վեստոնին: Ակզրից նա մեղ պատմում եր, վոր ապրանքների գները վորոշվում են աշխատավարձով և վոր, այսպիսով, աշխատավարձի բարձրացման դեպքում, ապրանքների գները պետք է բարձրանան: Այսուհետեւ, նա ընդհակառակը, ջանում ե ապացուցել, վոր աշխատավարձի բարձրացումը վոչ մի ողուածեր բերի, վորովհետև կրարձրանային ապրանքների գները, և վորովհետև աշխատավարձը փաստորեն չափվում է այն ապրանքների գներով, վորոնց վրա այն ծախսվում է: Յեկ այսպիսս, մենք սկսեցինք այն հաստատումից, թե ապրանքների արժեքը վորոշվում է բանվորական ուժի արժեքով, և վերջացրինք այն հայտարարությամբ, վոր բանվորական ուժի արժեքը վորոշվում է ապրանքների արժեքով: Այսպիսով մենք պտտվում ենք կախարդական շրջադառում և չենք կարողանում հանդել վորեւ յեղբակացության:

Ակներեւ և, վոր յեթե մենք մի ապրանքի, որինակ՝ աշխատանքի, հացահատիկի կամ վորեւ ուրիշ ապրանքի արժեքը դարձնենք արժեքի ընդհանուր չափանիշ կամ արժեքի կարգավորիչ, ապա սրանով միայն դժվարություն կստեղծենք, վորովհետև մենք մի արժեքը պետք է վորոշենք մի ուրիշ արժեքով, վորը նախորոք դեռ պետք է վորոշել:

Արստրակոտ արտահայտված այն դոգման, թե «աշխատավարձը վորոշում է ապրանքների գները», հանդում ե մի այլ դրության. «արժեքը վորոշվում է արժեքով», և այս տավտողոգիան վկայում է, վոր մենք փաստապես արժեքի մասին վոչինչ չղիտենք: Յեթե մենք ընդունեյինք այդ դրությունները, ապա քաղաքանատեսության ընդհանուր որենքների ամեն մի քննարկում կդառնար պարզ դատարկախոսություն: Այս պատճառով նիկարդոյի խոշոր ծառայությունն այն եր, վոր նա իր 1817 թ. հրատարակված՝ «Քաղաքանատեսության հիմունքների մասին» աշխատության մեջ խորտակեց հնացած և հին այն մոլորությունը, թե իբր «աշխատավարձը վորոշում է ապրանքների գները», այն սիսալ ուսմունքը, վոր Ար-

դամ Ամերին ու նրա ֆրանսական նախորդները ժխտեցին իրենց աշխատությունների խսկական դիտական մասերում, և վորը նրանք այնուամենայնիվ նորից շարադրեցին վայն հասարակության համար կանխորոշված հանրամատչելի հոդվածներում:

ԱՐԺԵՔ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Քաղաքացիներ, յես հասա այն կետին, յերբ պետք ե սկսեմ հարցը քննել ըստ եյտության: Յես չեմ կարող խոստանալ, թե այդ բանը կկատարեմ ձեզ միանդամայն բավարարող ձեռվ, վորոհետեւ դրա համար ինձ անհրաժեշտ կլիներ ընդդրկել քաղաքատնտեսության վողջ բնադրավառը: Այլ յես կարող եմ, ինչպես արտահայտվում են ֆրանսացիք՝ «effleurer la question», այսինքն՝ շոշափել մեր այն հիմնական հարցերը:

Առաջին հարցը, վորը պետք ե մենք գնենք, այդ այն և, թե ի՞նչ է ապրանքի արժեքը: Ինչո՞վ ե վորոշվում այն:

Առաջին հայացքից թվում ե, թե ապրանքի արժեքը միանդամայն հարաբերական հասկացողություն ե, վորը կարելի յե ընորոշել սոսկ մյուս ապրանքների հետ ունեցած նրա հարաբերությամբ: Յեթե մենք խոսում ենք արժեքի, ապրանքի փոխանակային արժեքի մասին, ապա իրականում մենք հասկանում ենք մյուս ապրանքների պրոպորցիոնալ մի քանակ, վորի հետ այս ապրանքը կարող է փոխանակվել: Բայց հարց ե ծագում: Ի՞նչպես են կարգավորվում այն պրոպորցիոնալ հարաբերությունները, վորոնց մեջ ապրանքները գտնվում են միմյանց հետ:

Մենք փորձից դիտենք, վոր այդ հարաբերություններն անչափ բաղմաղան են: Յեթե մենք վերցնենք միայն մեկ ապրանք, որինակ, ցորեն, ապա կտեսնենք, վոր մեկ կվարտեր հացահատիկը փոխանակվում է մյուս ապրանքների հետ անչափ բաղմապիսի պրոպորցիաներով: Այսուամենայնիվ, քանի վոր նրա արժեքը մշտապիս մնում է անփոխիլս, ապա այդ արժեքը՝ արտահայտվի այն մետաքսով, վոսկով կամ վորեւ ուրիշ ապրանքով, ունի ինչ վոր տարրեր և անկախ մի բան այն պրոպորցիաներից, վորոնցով նա փոխանակվում է մյուս ապրանքների հետ: Պետք ե վոր դույություն ունենա մի հնարավորություն՝ վորեւ ուրիշ ձեռվ արտահայտելու հավասարության այս բոլոր հարաբերությունները միշտը տարրեր առարկաների հանդեպ:

Այսուհետեւ, յեթե յես սասում եմ, վոր մի կվարտեր հացահատիկը փոխանակվում է յերկաթի հետ վորոշ պրոպորցիայով, կամ

թե մի կվարտեր հացահատիկի արժեքն արտահայտվում է վորոշ քանակի յերկաթով, ասպա սրանով յես ասում եմ, վոր հացահատիկի արժեքը և նրա յերկաթով արտահայտված ելլիվալենտը հալասար են ինչ-վոր յերբորդ առարկայի, վոչ հացահատիկի, վոչ ել յերկաթի, վորովհետեւ յես այս գեղքում անսպայման հասկանում եմ, վոր նրանք միենույն մեծություններն են յերկու տարրեր ձևերով։ Այս պատճառով նրանցից ամեն մեկը, ցորենը կամ յերկաթը, անկախ միմյանցից պետք ե արտահայտվեն մի ինչ-վոր յերբորդ առարկայով, վորը հանդիսանում է նրանց ընդհանուր չափանիշը։

Վորպեսզի պարզենք այս, յես մի հասարակ որինակ կրերեմ յերկախափությունից։ Յեթե մենք համեմատենք տարրեր ձևի և չեծության յեռանկյունիների մակերեսները, յեռանկյունիներն ուղղանկյունների հետ կամ վորեւ ուրիշ ուղղագիծ ֆիգուրների հետ, ասպա այս գեղքում մենք ի՞նչպես ենք վարվում։ Մենք յուրաքանչյուր յեռանկյունու մակերեսը բերում ենք մի այնպիսի արտահայտության, վորը բոլորովին տարրեր և նրա արտաքին տեսքից։ Յեռանկյունու հատկությունների հիման վրա, ընդունելով, վոր նրա մակերեսը հավասար է հիմքի և բարձրության արտադրյալի կեսին, մենք կարող ենք հավասարեցնել տարրեր մեծության և բոլոր տեսակի յեռանկյունները, ինչպես նաև մյուս ուղղագիծ ֆիգուրները, վորովհետեւ նրանցից յուրաքանչյուրը կարող է վերածվել վորոշ քանակի յեռանկյունների։

Այսպիսի յեղանակ պետք է կիրառել նաև ամլրանքների արժեքների վերաբերյալ։ Մենք պետք ե հնարավորություն ունենանք նրանց բոլորին բերել մեկ ընդհանուր արտահայտության, տարրերելով նրանց մեկը մյուսից սոսկ այն հարաբերությամբ, թե նրանցից յուրաքանչյուրը քանի՞ անդամ ե պարունակում միենույն նույնանման չափը։

Քանի վոր ապրանքների փոխանակային արժեքը միայն այդ ապրանքների հասարակական ֆունկցիայի դրսերումն է և այս պատճառով ել վոչ մի ընդհանուր բան չունի նրա բնատուր ընդունակությունների հետ, ասպա մենք պետք ե նախապես պարզենք, թե ի՞նչն է հանդիսանում այն հասարակական սուբստանցը, վորն ընդհանուր և բոլոր ապրանքներին։ Այսպիսի տարր է հանդիսանում աշխատանքը։ Ապրանք արտադրելու համար պետք ե նրա մեջ ներդնել կամ նրա վրա գործադրել վորոշ քանակի հասարակական աշխատանք։ Յես ասում եմ վոչ պարզապես աշխատանք։

այլ հասարակական աշխատանք։ Այն մարդը, վոր առարկան արտադրում է իր սեփական անմիջական սպառման համար, այսինքն՝ նրա համար, վորպեսզի ինքն սպառի, ապա նա արտադրում է պրոդուկտ, և վոչ ապրանք։ Իրը հենց իր համար աշխատող՝ արտադրող, նա գուրս և կանգնած հասարակությունից։ Ապրանք արտադրելու համար մարդը վոչ միայն պետք է այնպիսի պրոդուկտ ստեղծի, վորը բավարարի վորեւ հասարակական պահանջ, այլ նրա աշխատանքն ինքն իր հերթին պետք է կազմի հասարակության ծախսած աշխատանքի ընդհանուր գումարի մի մասը։ Նա պետք է գտնվի հասարակության մեջ աշխատանքի բաժանման ամերայում։ Նա առանց աշխատանքի մյուս ստորաբաժանումների վոչից ստորաբաժանումների վոչից պետք է լրացնի նրանց։

Կոսկով ապրանքների, իրեւ արժեքների մասին, մենք գրանք բացառապես քննում են իրայնացած, ֆիքսացիայի յենքարկված, կամ, յեթի կուզեք, բյուրեղացած հասարակական ընդհանուր աշխատանքի տեսակետից։ Այս տեսակետից նրանք կարող են մեկը խատանքի տեսակետից։ Այս տեսակետից նրանք կարող են մեկը յուսուից տարրերվել միայն նրանով, վոր ներկայացնում են շատ համ քիչ քանակությամբ աշխատանք։ այսպես, որինակ, մետաքսե համ քիչ քանակությամբ աշխատանքի ներդրված, քան աղյուսի մեջ։ Թայնակի մեջ ավելի աշխատանք է ներդրված, քան աղյուսի մեջ։ ակայան ի՞նչպես ե չափվում, արդյոք, աշխատանքի քանակը։ Այն ժամանակով, վորի ընթացքում կատարվում է աշխատանքը, այսինքն՝ ժամերով, որերով և այլն։ հարակե, այսպես չափելու համար անհրաժեշտ է նախապես աշխատանքի բոլոր ձևերը վերածել միջին կամ հասարակ աշխատանքի, վորպես նրանց ընդհանուր միակորի։

Այսպիսով, մենք հանդում ենք հետևյալ յեղակացության։ Ապրանքն արժեք ունի, վորովհետեւ այն հանդիսանում է՝ բյուրեղացած նախարակական աշխատանք։ Այսպիսով, ապրանքների հարաբերական արժեքը վարոշվում է այն աշխատանքի հարաբերական քանակով կամ գումարով, վոր գործադրված է այդ ապրանքների վրա, իրայնացված ու ֆիքսացիայի յենքարկված նրանց մեջ։ Այն ապրանքների համապատասխան քանակը, վորոնք կարող են արտադրվել աշխատանքային միենույն ժամանակի ընթացքում, ունեն հավասար արժեքներ, կամ մեկ ապրանքի արժեքը մյուսի ար-

ԺԵՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Ե ԱՅՆԱԿԵ՛Ն, ԻՆՉՈՒՄ ՄԵԿԻ ՄԵջ ՓԻՔՍԱՍԻԱՅԻ
յԵՆԹԱՐԱԿՎԱԾ աշխատանքային ժամանակը վերաբերում է յԵՐԿՐՈՐ-
ԴԻ ՄԵջ ՓԻՔՍԱԳԻՋԻ յԵՆԹԱՐԱԿՎԱԾ աշխատանքային ժամանակին:

ՅԵԽ ԿԱՍԿԱԾՈՒՄ ԵՄ, թե ձեզնից շատերը հՀարցնեն. իսկապես
գոյություն ունի՞ այնպիսի մեծ կամ ընդհանրապես վորեւե տար-
բերություն աշխատավարձի հիման վրա ապրանքների արժեքների
վորոշման և նրա աշխատանքի հարաբերական բանակուրյան հի-
ման վրա արժեքների վորոշման միջև, վորն անհրաժեշտ
և նրանց արտադրության համար: Զեղ անհրաժեշտ ե պար-
զել, վոր աշխատանքի հատուցում և աշխատանքի բանակ —
յերկու տարբեր և բոլորվին անհամեմատելի բաներ են:
ԵԵՆԹԱՐԵՆՔ, որինակ, վոր մեկ կվարտեր հացահատիկի
և մեկ ունցիա վոսկում մեջ իրայնացած և աշխատանքի միատեսակ
քանակ: ՅԵԽ այս որինակն եմ վեցնում, վորովհետեւ այդ գոր-
ծածել ե ԲԵՆՅԱՄԻՆ Ֆրանկինն իր 1721 թվին հրատարակված
A Modern Inquiry into the Nature of Necessity of a Paper Cu-
rrency» («ԹՂԵՐԱՊԱՄՆԵՐԻ բնության և անհրաժեշտության համեստ
հետազոտություն») յԵՐԿԻ միջ, վորտեղ նա առաջնորդից մեկը
լինելով, գտավ արժեքի իսկական եյությունը: Այսպես ուրեմն,
մենք յԵՆԹԱՐԵՐՈՒՄ ենք, վոր մեկ կվարտեր ցորենը կամ մեկ ուն-
ցիա վոսկին հավասար արժեքներ կամ եկվիլաբնեներ են ներկա-
յացնում, վորովհետեւ նրանք հանդիսանում են միևնույն բանակի
բյուրեղացած միջին աշխատանք, այսինքն՝ մի աշխատանք, վորը
գործադրված ե նրանցից յուրաքանչյուրի վրա այսքան որվա կամ
այսքան շարաթվա ընթացքում:

Այսպես վորոշելով վոսկու և հացահատիկի հարաբերական
արժեքը, արդյոք մենք վորեւե կերպ մատնանշում ենք գյուղական
կամ հանքային բանվորների աշխատավարձը: Վո՛չ մի կերպ:
Մենք բոլորովին չենք չոչափում այն, թե արդյոք վճարված ե շա-
րաթականն, թե՞ որական աշխատանքի համար և ընդհանրապես,
թե այստեղ գործադրված ե յեղել վարձու աշխատանք, թե վոչ:
Վերջին գեպքում աշխատավարձի չափերը իրառող են խիստ տար-
բեր լինել: Այն բանվորը, վորի աշխատանքը ներդրված ե մեկ
կվարտեր հացահատիկի միջ, կարող ե ստանալ միայն յԵՐԿՈՒ
բուշի հացահատիկ, իսկ հանքային արդյունաբերության մեջ
զբաղված բանվորը կարող է ստանալ կես ունցիա վոսկի: ՅԵՐԵ
ՆՈՒՅՆԻՍԻ յԵՆԹԱՐԵՆՔ, վոր նրանց աշխատավարձը միատեսակ է,
ապա, համեստայն գեպք, այն կարող է նրանց պատրաստած առար-

կաների արժեքներից շատ բազմապեսի կերպով շեղվել: Այն կա-
րող է հավասարվել մեկ կվարտեր հացահատիկի կամ ունցիա վոս-
կու կեսին, մեկ յԵՐԿՐՈՂԻ, մեկ չինդերորդին, մեկ հինգերորդին կամ
վորեւե այլ մասին: Այս բանվորների աշխատավարձը չի կարող,
իհարկե, գերազանցել նրանց պատրաստած ապրանքների արժեքին,
չի կարող նրանից բարձր լինել, բայց այն կարող է ամենատարբեր
աստիճաններով նրանից ցածր լինել: Բանվորների աշխատավարձն
իր սահման ունի իրենց արտադրանքների արժեքի մեջ, բայց
նրանց արտադրանքների արժեքների սահմանը չի սահմանվում
նրանց աշխատավարձով: Յեղ ամենից առաջ այնպիսի արժեքներ,
ինչպես, որինակ, հացի և վոսկու հարաբերական արժեքները, սահ-
մանվում են բոլորովին անկախ նրանց մեջ ներդրված աշխատան-
քից—մենք ուղղում ենք սաել՝ անկախ աշխատավարձից: Այս պատ-
քից մենք ուղղում ենք սաել՝ անկախ աշխատավարձից: Այս պատ-
քից մենք ուղղում ենք սաել՝ անկախ աշխատավարձից: Այս պատ-
քից մենք ուղղում ենք սաել՝ անկախ աշխատավարձից: Այս պատ-
քից մենք ուղղում ենք սաել՝ անկախ աշխատավարձից:

Ապրանքի փոխանակային արժեքը վորոշելիս մենք պետք ե
իրեն խակ արտադրության վրա գործադրված աշխատանքի քանա-
կին ավելացնենք այն աշխատանքի քանակը, վոր առաջ ներդրված
է յեղել հում նյութի մեջ, ինչպես նաև այն աշխատանքը, վոր
գործադրված է արտադրության պլոցեսում գեր խաղացող գոր-
ծածական արժեքների, մեքենաների, տների վրա: Այսպես,
որինակ, վորոշ քանակությամբ բամբակի մանվածքի արժեքն այն
աշխատանքի բյուրեղացած քանակն է, վոր գործադրված է բամ-
բակաթել մանելիս՝ այն աշխատանքի քանակը, վորն իրայնացած
է յեղել առաջ հենց բամբակի մեջ, այն աշխատանքի քանակը, վոր
ներդրված է ածուլիսի, յուղի և աշխատանքի համար անհրաժեշտ
ներդրված է ուժանուածի միջոցների մեջ. աշխատանքի այն քանակը, վոր
մյուս ուժանուածի միջոցների մեջ և այլն: Արտադրության գյություն ունեցող
միջոցները, ինչպես, որինակ, գործիքները, մեքենաները, չենքըրը,
արտադրության կրկնվող պլոցեսի շատ կամ քիչ տևական շրջա-
նից հետո պետք է փոխարինվեն նորերով: Յեթե նրանք, իրեւ
հում նյութ, մաշվելին մեկ տարվա ընթացքում, ապա նրանք
իրենց ամբողջ արժեքը միանդամելից կիսոխանցելին այն ապրանք-

ների մեջ, վորոնց արտադրության միջոցներ նրանք գործածվելին։ Բայց քանի վոր, որինակ, մանող դադյահը մաշվում է աստիճանաբար, ասլա արվում է միջին հաշիվ, վորի հիմքում դրվում է դադյահի գոյության և նրա ոգոտագործման կամ կիրառման միջին տևողությունը վորոշակի ժամանակի, ասենք թե՝ մեկ որդի անթացքում։ Այսպիսով, մենք հաշվում ենք, թե մանող դադյահի արժեքի վոր մասն է անցնում որվա ընթացքում պատրաստված մանվածքի մեջ և, այդ պատճառով, որինակ, մի ֆունտ մանվածքի մեջ իրայնացած աշխատանքի ընդհանուր դումարի վոր մասն է ընկնում այն աշխատանքին, վոր առաջ իրայնացել եր մասող դադյահի մեջ։ Սակայն մեր այս խնդիրը լուծելու համար մենք կարիք չունենք այժմ ավելի յերկար կանոք առնելու այս կետի վրա։

Կարող ե թվալ, վոր յեթե ապրանքի արժեքը վորոշվում է նրա արտադրության վրա գործադրված աշխատանքի քանակությամբ, ապա սրանից բղխում ե, վոր վորքան ավելի ծույլ և անընդունակ է աշխատողը, այնքան ավելի մեծ արժեք պետք է ունենա պատրաստվող ապրանքը, քանի վոր ապրանքը պատրաստելու համար նա կարիք կունենա համեմատաբար ավելի շատ ժամանակի։ Սակայն այս միտքը վողբալի մոլորություն կլիներ։ Դուք հիշում եք, վոր յես գործածեցի «հասարակական աշխատանք» արտահայտությունը, և այդ «հասարակական» շատ հարմար բնորոշման մեջ պարունակվում են շատ հասկացողություններ։ Յեթե մենք ասում ենք, վոր ապրանքի արժեքը վորոշվում է նրա վրա գործադրված, նրա մեջ բյուրեղացած աշխատանքի քանակով, ապա այս ասելով մենք հասկանում ենք այն աշխատանքի բանակը, վոր անհրաժեշտ է նրա ստեղծման համար հասարակության տվյալ վիճակում, արտադրության վորոշակի հասարակական միջին պայմաններում, բնակչության տվյալ միջին խտության և աշխատանքի գործադրման միջին կարողության դեպքում։ Յերբ Անդիհայում մեխանիկական մանածային մեքենան սկսեց մրցել ձեռքի մեքենայի հետ, ապա վորոշ քանակությամբ մանվածքը մեկ արշին մահուղի կամ չթի վերածելու համար պահանջվում եր նախկին աշխատանքային ժամանակի կեսը։ Խեղճ ձեռքի ջուլհակն առաջվա աշխատած որական իննից—տաս ժամի վոխարեն գործի վրա նստում եր տասնյոթ և տասնութ ժամ։ Սակայն այժմ նրա քսան ժամվա աշխատանքի արդյունքը ներկայացնում եր միայն տասը հասարակական ժամ,

կտմ հասարակական աշխատանքի տաս ժամ, վորոնք անհրաժեշտ եյն այն ժամանակ վորոշ քանակությամբ մանվածքը գործվածքի վերածելու համար։ Հետեաղես, նրա՝ քսան ժամվա ընթացքում դերածելու համար զամար է նրա գործադրությունը ավելի արժեք չուներ, քան նրա նախկին տասժամար աշխատանքի արդյունքը։

Յել այսողես, յերբ ապրանքների մեջ իրայնացած հասարակականորեն-անհրաժեշտ աշխատանքի քանակը վորոշում է նրանց փոխանակային արժեքները, ապա ապրանքն արտադրելու համար անհրաժեշտ աշխատանքի քանակի ամեն մի ավելացում պետք երարձրացնի վերջինիս արժեքը, և ընդհակառակը, ամեն մի նվազում պետք ե իջեցնի այդ արժեքը։

Յեթե տարրեր տեսակ ապրանքներ ստեղծելու համար անհրաժեշտ աշխատանքի քանակները մնային անփոփոխ, ապա նրանց հարաբերական արժեքներն ել անփոփոխ կլինեյին։ Բայց մենք իրականում այս բանը չենք տեսնում։ Վորևէ ապրանք արտադրելու համար անհրաժեշտ աշխատանքի քանակը մշտապես փոփոխվում է արտադրական ուժերի վրա գործադրվող աշխատանքի փոփոխության հետ միասին։ Վորքան մեծ և աշխատանքի արտադրողական ուժը, այնքան ավելի շատ պրոդուկտ և պատրաստվում տվյալ աշտը, այնքան ժամանակի ընթացքում, և ընդհակառակը, վորքան խատանքային ժամանակի ընթացքում, այնքան ավելի քիչ փոքր և աշխատանքի արտադրողական ուժը, այնքան ավելի քիչ և պրոդուկտ պատրաստվում նույն ժամանակի ընթացքում։ Յեթե, որինակ, բնակչության ավելացման դեպքում անհրաժեշտ լիներ համար, համակարգության ավելացման անհրաժեշտ ապահովությամբ անհրաժեշտ լիներ ավելի նվազ պաղպարեր հողեր մշակել, ապա վորոշակի քանակությամբ մթերք ստանալու համար պետք կլիներ ավելի մեծ քանակությամբ աշխատանք գործադրել, վորի հետեանքով կմեծանար կությամբ աշխատանք գործադրել արժեքը։ Մյուս կողմից՝ պարզ է, վոր յեթե մեկ մանողն աշխատանքային որվա ընթացքում, ժամանակակից արտադրության գործիքների ողնությամբ, միքանի հաղար անդամ ավելի բամբակ և մանվածքի վերածում, քան նակարող եր այդ անել ճախարակի ողնությամբ միենույն ժամանակի չիցողում, ապա բամբակի յուրաքանչյուր առանձին փունտ կլանում և մանողի այնքան հաղար անդամ ավելի աշխատանք, քան առաջ։ Մանվածքի արժեքը պետք ե իջնի համապատասխան չփով։

Բացի այն տարրերությունից, վոր գոյություն ունի տարրեր ժողովուրդների աշխատանքի բնական լարվածության և ձեռք բե-

բած վարպետության միջև, աշխատանքի արտադրողականությունը գլխավորապես պետք է կախում ունենա.

Առաջին՝ աշխատանքի բնական պարմաներից, ինչպես զետնի, հանքերի հարստությունը և այլն:

Յերկրորդ՝ հասարակական արտադրողական ուժերի պրոդրեալի բարեւալումներից, վորոնք ստեղծվում են արտադրության չափերի ընդարձակմամբ, կապիտալների կոնցենտրացիայով, աշխատանքի կոմբինացիայով և բաժանմամբ, մեքենաների դրությունով, արտադրության մեթոդների լավացումով, քիմիական և բնության այլ ուժերի կիրառումով, շրջանառության և տրանսպորտի ողնությամբ ժամանակը և տարածությունը կրճատելով, նմանապես և բոլոր նոր հարմարանքներով, վորոնց միջոցով գետությունը ստիլում և բնության ուժերին ծառայել աշխատանքին, և վորոնց ողնությամբ աշխատանքի հասարակական կամ կոռուպերատիվ բնությը համառում է իր լիակատար զարդացման: Վորքան քարձոր և աշխատանքի արտադրողականությունն, այնքան ՖԻՀ աշխատանք պետք է գործադրել վորոշակի քանակությամբ պրոդուկտներ արտադրելու համար: Հետևաբար, այնքան քիչ կլինի պրոդուկտի արժեքը: Վորքան ցած և աշխատանքի արտադրողականությունը, այնքան շատ և միևնույն քանակի պրոդուկտների արտադրության վրա գործադրված աշխատանքը: Նույնքան մեծ և այս դեպքում նրանց արժեքը:

Այս բանի հետևանքով, իրրե ընդհանուր որենք մենք պետք ենդունենք, վոր

Ապրանքների արժեքներն ուղիղ համեմատական են նրանց արտադրության վրա ծախսված աշխատանքային ժամանակի քանակին և հակառակ համեմատական են նրանց վրա բափած աշխատանքի արտադրողականությանը:

Մինչև այժմ յես խոսում եյի միայն արժեքի մասին, իսկ այժմ կալելացնեմ միքանի խոսք ել գնի մասին, վորը հանդիսանում է ուկ այն ձեզ, վոր ընդունում է արժեքը:

Գինն ինքնին վոչ այլ ինչ ե, յերե վոչ արժեքի փողային արտահայտությունը: Բոլոր ապրանքների արժեքներն Անդիմայում, որինակ, արտահայտվում են գլխավորապես վոսկով, մինչդեռ ցածքի վրա գերազանցապես նրանք արտահայտվում են արժաթով: Վոսկու և արծաթի, ինչպես նաև մնացած բոլոր ապրանքների արժեքները վորոշվում են նրանց ձեռքբերման համար անհրաժեշտ աշխատանքի քանակով: Զեր ազգային պրոդուկտների վորոշ քանակը,

վորոնց մեջ բյուրեղացած է ձեր ազգային աշխատանքի վորոշ քանակ, գուռք փոխանակում եք վոսկի և արծաթ արտադրող յերկիրների այն պրոդուկտների հետ, վորոնց մեջ բյուրեղացած է նրանց աղցային աշխատանքի վորոշ քանակը: Այսպիսով, գնի միջոցով դուք վոսկով և արծաթով արտահայտում եք բոլոր ապրանքների արժեքները, այսինքն՝ հարաբերական աշխատանքի այն քանակը, վոր գործադրվել է նրանց ստեղծման վրա: Յեթե դուք խորը թափանցայի արծաթության մեջ կամ՝ վոր միենաց արժեքների գործադրելու մեջ, ապա դուք կդանեք, վոր այդ այն պրոցեսն է, վորի միջոցով դուք բոլոր առարկաների արժեքներին տալիս եք ինքնուրույն և միակերպ ձեւ, կամ վորի միջոցով դուք նրանց նշանակում եք, վորպես հասարակական միատակալ աշխատանքի քանակին եք:

Գինն ել հենց այնքան, վորքան նա հանդիսանում է արժեքի փողային արտահայտությունը, Աղամ Սմիթի կողմից կոչվել է «նատուրալ գին», Փրանսական Փիղիոկրատների կողմից՝ «անիրածեցու գին»(prix nécessaire):

Սակայն ի՞նչպիսի հարաբերություն գոյություն ունի արժեքի և չուկայական գնի, կամ նատուրալ և չուկայական գների միջև: Դուք բոլոր գիտեք, վոր բոլոր միատեսակ ապրանքների չուկայական գները լինում են միևնույնը, վորքան ել վոր այդ գեղագում տարբեր լինեն առանձին արտադրողների արտադրության պայմանները: Շուկայական գինն արտահայտում է միայն հասարակական աշխատանքի այն միջին քանակը, վոր անիրածեցու և արտադրության միջին պայմաններում՝ շուկային վորոշակի քանակի վորոշակի առարկաներ մատակարարելու համար: Այն սահմանվում է վորքական գործադրությունը տեսակի ապրանքների ընդհանուր քանակի համեմատ:

Այս բանի համեմատ ապրանքի շուկայական գինը համաձարնեցվում է նրա արժեքի հետ: Մյուս կողմից՝ շուկայական գների տառանումը, վորոնք մերթ բարձրանում են արժեքից կամ նատուրալ գնից, մերթ իջնում են նրանից ցած, կախված են առաջարկի և պահանջի տառանումից: Շուկայական գների շեղումն արժեքից կատարվում է մշատագես, բայց Աղամ Սմիթի խոսքերով ասած՝ «նատուրալ գինն այն գինն է, վոր կազմում է կենարոն, վորի շուրջը միշտ պտտվում են ապրանքների գները: Տարբեր պատահական նություններ կարող են յերբեմն նրանց բարձր պահել դրանից և յերբեմն անողամ իջեցնել նրանից ել ցած: Բայց ինչ խոչնորուներ

ել վոր լինեն, վորոնք խանդարեն նրանց կանգ առնելու այդ կայունության և հանդստի կենտրոնում, համենայն դեպս, նրանք մշտապես ձգտում են դեպի այն» :

Ցեմ չեմ կարող այժմ ավելի մանրամասն կանգ առնել սրա վրա : Հավական ե ասել, վոր յերե առաջարկին ու պահանջը մեկը մյուսին և առաջարակշուն են, ապա ապրանքների շուկայական գները գուգադիպում են նրանց նատուրալ գներին, այսինքն՝ նրանց արժեքներին, վորոնք վորոշվում են նրանց արտադրության համար անհրաժեշտ աշխատանքի վորոշ քանակով : Սակայն առաջարկն ու պահանջը մշտապես պետք է ձգտեն հավասարակշունթյան, թեկուղ և այդ կատարվի միայն յուրաքանչյուր տատանում հակադիր տատանմամբ հավասարակշունթ, յուրաքանչյուր բարձրացում փոխարինելով անկումով, և ընդհակառակը : Ցեմ գուք փոխանակ քննարկելու միայն ամենորյա տատանումները, հետազոտեք այն շարժումը, վոր տեղի յեռնենում շուկայական գներում յերկարատես շրջանների ընթացքում, ինչպես, որինակ, այդ բանն կատարել ե պարոն Տոոկ (Tooke) իր «Գների պատմության » մեջ, ապա գուք կդանեք, վոր շուկայական գների տատանումները, նրանց շեղումն արժեքներից, նրանց բարձրացումն ու անկումը մեկը մյուսին վոչընչացնում և լրացնում են այնպես, վոր յեթե ուշադրության չառնենք մոնոպոլիաների և մյուս սահմանափակումների աղղեցությունը, վորոնց յես այժմ անդրադառնալ չեմ կարող—բոլոր տեսակի պարանքները վաճառվում են, միջին հաշվով, ըստ իրենց համապատասխան արժեքների կամ նատուրալ գների : Ժամանակի միջին պերիոդները, վորոնց ընթացքում շուկայական գների տատանումները մեկը մյուսին հավասարակշունում են, տարբեր տեսակի ապրանքների համար տարբեր են, վորովհետեւ միքանի դեպքերում պահանջն ու առաջարկն ավելի հեշտ են հավասարվում, քան մյուս դեպքերում :

Ցեմ, այսպիսով, ընդհանրապես ժամանակի ավելի յերկարատես պերիոդի քննարկման դեպքում պետք է ընդունել, վոր ամեն տեսակի առարկաները վաճառվում են իրենց արժեքների համաձայն, ապա անհեթեթություն կլիներ կարծել, թե իրը շահույթը (վոչ թե այն շահույթը, վոր ստացվում ե առանձին դեպքերում, այլ ընդհանուր, հաստատուն շահույթը, վոր ստացվում ե արդյունաբերության տարբեր ճյուղերում) առաջ է զալիս ապրանքների գներից, այսինքն՝ նրանից, վոր ապրանքները վաճառվում են իրենց արժեքներից նշանակելի չափով բարձր գներով : Այս հայացքի ան-

հեթեթությունն ավելի յե պարզվում նրա ընդհանրացման դեպքում : Այն, ինչ յուրաքանչյուրը ձեռք կբերե իրեւ վաճառող, ապա նա մշտապես կկորցներ իրեւ գնող : Այստեղ ամենենին չի ոգնում այն առարկությունը, թե կան մարդիկ, վորոնք մշտական գնորդներ են հանդիսանում՝ չինելով վաճառողներ, կամ արտադրողներ են՝ չինելով սպառողներ : Այն ամենը, ինչ այդ մարդիկ հատուցում են արտադրողներին, նրանք պետք ե նախորդ ստանային նրանցից առանց վորեւ հատուցման : Ցեմեւ վորեւ մեկը ձեղնից սկզբից փող առանց վորեւ հատուցման : Ցեմեւ վորեւ մեկը ձեղնից սկզբից փող ե պետք ե ապա վերադարձնում մեղ այդ փողը, ապա դուք ե վերցնում և ապա մկանը ձեր ապրանքներն այդ բնավլ չեք հարստանա նրանով, վոր սկսեք ձեր ապրանքներն այդ բնավլ չեք հարստանա նրանով, վոր սկսեք ձեր ապրանքներն այդ բնավլ չեք հարստանա նրանով : Առեւրի նման յեմարդուն վաճառել չափազանց թանգ գներով : Առեւրի նման յեմարդուն վաճառել չափազանց թանգ գներով : Առեւրի նման յեմարդուն վաճառել չափազանց թանգ գներով :

Ցեմեարար, շահույթի ծագման բացատրության համար դուք պետք ե յենեք այն գրությունից, վոր ապրանքները, միջին առուղ մով, ծախվում են իրենց իսկական արժեքով, և վոր շահույթը ստացվում ե հենց այն բանից, վոր ապրանքները վաճառվում են ստացվում ե հեջ իրայնացած իրենց արժեքներով՝ համապատասխան իրենց մեջ իրայնացած աշխատանքի քանակության : Ցեմ գուք չեք կարող շահույթը բացատրել այդ ճանապարհով, ապա դուք չեք կարող այն առհարակ բացատրել : Սա թվում ե պարագուսային և հակասում ե ստարակ բացատրել : Սա թվում ե պարագուսային և հակասում ե ամենորյա դիտողություններին : Բայց չե՞ վոր թե՛ այն, վոր յերկեր ամենորյա դիտողություններին : Բայց չե՞ այն, վոր ջուրը բաղկացած ե թը պտուղում ե արեկի շուրջը, և թե՛ այն, վոր ջուրը բաղկացած ե գիտակուր գաղերից, նույնպես պարագուս ե : Գիտական յերկու բոնկողով գաղերից, նույնպես պարագուս ե : Գիտական յեմարդուն թանները միշտ ել թվում են պարագուսներ, յեթե նրանց քննադատենք ամենորյա փորձի տեսակետից, վորն ընդդրկում է միայն իրերի խարուսիկ արտաքինը :

ԲԱՆՎԱՐԱԿԱՆ ՈՒՓ

Ցեմաղոտելով արժեքի բնությունը և զանազան տեսակի ապրանքների արժեքը, վորքան այդ հանրավոր ե թուցիկ ակնարկով, մենք պետք ե մեր ուշադրությունը դարձնենք մի յուրահպտուկ՝ արժեքի՝ աշխատանիքի արժեքի վրա : Այստեղ նույնպես յետ պետք ե զարգացնեմ թվացող պարագուսով : Զեղանից ամեն մեկը համոզված ե, վոր այն, ինչ դուք ամեն որ վաճառվում եք, ձեր աշխատանքն ե, վոր այսպիսով, աշխատանքը գին ունի և վոր՝ վորչատանքն ե, վոր ապրանքի գինը նրա արժեքի փողային արտահայտությունն

ե, ապա անշուշտ պետք ե գոյություն ունենա «աշխատանքի արժեքի» նման մի ինչպոր բան: Բայց գոյություն չունի «աշխատանքի արժեք» այս բառը սովորական իմաստով: Մենք տեսանք, վոր ապրանքի արժեքը կազմում ե նրա մեջ բյուրեղացած աշխատանքի այն քանակը, վոր անհրաժեշտ ե նրա արտադրության համար: Յեթև մենք ոգտվենք արժեքի այդ հասկացողությունից, ապա լո՞նչակես կարող ենք վորոշել, ասենք թե, տաս ժամվա աշխատանքային որվա արժեքը: Վո՞րքան աշխատանք ե սպառունակվում այդ որվա մեջ: Տաս ժամվա աշխատանք: Տավոլողիա և կատարյալ անհեթեթություն կլիներ ասել, թե տաս ժամվա աշխատանքային որվա արժեքը տաս աշխատաժամ ե կամ հավասարվում ե նրա մեջ պարունակված աշխատանքի քանակին:

Իչարկե, յերբ մենք նախապես կբացահայտենք «աշխատանքի արժեքի» արտահայտության ճշմարիտ, բայց թագնված իմաստը, միայն դրանից հետո ի վիճակի կլինենք բացատրել արժեքի հասկացողության այդ վոչ ուացիոնալ և անթույլատրելի թվացող կերպումը, ճիշտ այնպես, ինչպես մենք կարողանում ենք բացատրել յերկնային լուսատուների թվացող կամ վորոշակի ձեռվ տեսանելի շարժումը միայն այն բանից հետո, յերբ մենք նախապես հասկացել ենք նրանց շարժման որենքները:

Բանվորը վաճառում ե վոչ թե իր աշխատանքը, այլ իր աշխատանքին ուժը, վորը նա մերը լույսերը դնում ե կապիտալիստի տրամադրության տակ: Այս նկատողության իսկությունն ապացուցվում ե այն փաստով, վոր—չգիտեմ ինչպես ե անգլիական որենքը, բայց, համենայն գեսս, ցամաքի որենքներով—սահմանված ե առավելագույն ժամկետ, վորի ընթացքում յուրաքանչյուր անձ կարող է իր բանվորական ուժը վաճառել: Յեթև բանվորներին հնարավորություն տրվեր առանց ժամանակի վորեն սահմանափակման վաճառելու իրենց աշխատանքային ուժը, ապա դրանից անմիջապես հետո առաջ կգար ստրկություն: Յեթև, որինակ, նման վաճառքն ընդգրկեր բանվորի ամբողջ կյանքը, ապա նա իսկույն ևել կղանար գործառուի ցմահ ստրուկը:

Տակավին թոմաս Հորսը՝ Անգլիայի հին տնտեսագետներից և որիդինալ փիլիսոփաներից մեկը, իր «Լեվիաթան»-ի մեջ բնադրորեն մատնանշել ե այն հանդամանքը, վորի վրա նրա բոլոր հաջորդներն ուշագրություն չդարձրին: Նա ասում ե. «Մարդու արժեքը, ինչպես և մյուս բոլոր իրերի արժեքը, նրա գինն ե, այսինքն՝ այն ե, ինչ արվում ե նրա ուժի ոգտագործման համար»:

Այս հիմնական դրությունից յենելով, մենք կարող ենք աշխատանքի արժեքը վորոշել այնպես, ինչպես և մնացած բոլոր առանքների արժեքը:

Սակայն, նախքան այս կատարելը, մենք պետք ե հարցնենք վունչապես առաջացավ այն տարրինակ յերեւութը, յերբ մենք շուտքնչապես առաջացավ այն տարրինակ յերեւութը, վորոնք տիրապետում են կայում գտնում ենք մի շարք դնորդներ, վորոնք տիրապետում են մեքենաներին, հողերին, հումանական մեջ գոյամիջոցներին՝ այնպիսի առարկաների, վորոնք, բացառությամբ հողի, իրենց այնպիսի առարկաների, վորոնք, առաջարկությամբ հողի, իրենց ակղբնական դրությամբ հանդիսանում են աշխատանքի պրոդուկտներ, վորոնք վաճառողներ, վորոնք վաճառողներ, մյուս կողմից՝ մի շարք վաճառողներ, վորոնք վաճառողներ, մյուս կողմից՝ մի շարք վաճառողներ, բացի աշխատանքի համար պիտանի ձեռքերից և ուղեղից: Ի՞նչպես պատահականության համար անհրաժեշտ առարկաներ: Այս կյանքի պահպանության համար անհրաժեշտ առարկաներ: Այս կյանքի պահպանության համար անհրաժեշտ առարկաներին «ասացնի կամ սկզբնական կուտակման» հարցի քննարկումը կլիներ «ասացնի կամ սկզբնական կուտակման» հարցի քննարկումը կլիները, ինչպես այն կոչում են եկոնոմիստները, բայց հետազոտությունը, ինչպես այն կոչում են եկոնոմիստները, բայց կորը ճիշտ կլիներ կոչել «սկզբնական յուրացում»: Մենք կտեսվորը ճիշտ կլիներ կոչել «սկզբնական կուտակմանը» նշանաւոյնքն, վոր այս այսպես կոչված «սկզբնական կուտակմանը» նշանաւոյնքն, վան պատմական պրօցեսների մի շարք, վունչը այն ինչ, քան ապամական պրօցեսների մի շարք, վորոնց առաջինացի աշխատական վորների և իրենց գործունելու կամաքի վունչացումը: Ճիֆների միջն սկզբում գոյություն ունեցող կամաքի վունչացումը: Այս հետազոտությունը գուրս ե իմ ներկա խնդրի սահմաններից: Այդ հետազոտությունը գուրս ե այդպիսի անջատումն իր բայց քանի վոր առաջացավ բանվորի այդպիսի անջատումն իր բայց քանի վոր իրերի այդ դրությունը պետք ե աշխատանքի գործիքից, ապա իրերի այդ դրությունը պետք ե աշխատանքի պաշտպանմի և վերանորոգմի հարածուն չափելինքնարկյան պաշտպանմի և պաշտպանմի հարածուն չափելինքնարկյան մեջ չի վոչնչացնի այն և չի վերականգնի սկզբնական կամ կապերը պատմականնոր ձեռվ:

Յեւ այսպես, ի՞նչ բան և բանվորական ուժի արժեքը: Ինչպես ամեն մի ուրիշ առավանքի, նմանապես և նրա արժեքը վորոշվում է նրա ստեղծելու համար անհրաժեշտ աշխատանքի քանակությամբ: Մարդու բանվորական ուժը գոյություն ունի միայն նրա իենդանի անձնավորության մեջ: Մարդու պետք ե սպառի մթեքը ների վորոց քանակի, վորպեսի կարողանա իր գոյությունն ու զարգացումը պահպանել: Բայց մարդու ել մաշվում ե ճիշտ այնպես,

ինչպես և մեքենան, և այն ժամանակ նրան պետք է փոխարինել
ուրիշ մարդկանցով։ Բացի կենսական միջոցների վորոշ քանակու-
թյունից, վորոնք անհրաժեշտ են անձնապես նրա համար, բան-
վորը նմանապես միջոցներ պետք է ունենա, վորպեսողի դաստիա-
րակի յերեխաներին, վորոնք կիրարինեն նրան բանվորական շու-
կայում և կշարունակեն բանվորների ցեղը։ Բացի դրանից, վոր-
պեսզի իր բանվորական ուժը զարգացնի և ձեռք բերի վորոշ հմտու-
թյուն, նրան անհրաժեշտ է ծախսել արժեքների վորոշ քանակ ել։
Մեր նպատակի համար բավական է քննության առնել միայն միջին
աշխատանքը, վորի գոյացման և զարգացման համար անհրաժեշտ ե
ծախսել անհան մեծության արժեքներ։ Սակայն յես պետք ե
սպավեմ այս առթիվ, վորպեսզի հաստատեմ, վոր արդյունարե-
րության զանազան ճյուղերում գործադրվող բանվորական ուժերի
արժեքները նույնպես տարբերվում են միմյանցից, ինչպես տարբեր
են այն արժեքները, վորոնք ստեղծվում են զանազան տեսակի բան-
վորական ուժով։ Այս պատճառով աշխատավարձը հավասարեց-
նելու ձգուումը սխալ ե և հիմնված ե այն անբնական ցանկության
վրա, վորը յերբեք չի կարող կենսագործվել։ Այդ այն կեղծ և մա-
կերեսային ռադիկալիզմի արդյունքն ե, վոր ընդունելով նախա-
դրյաները՝ աշխատում ե խուսափել նրանց յեղբակացությունե-
րից։ Բանվորական ուժի, ինչպես և ամեն մի այլ ասլրանքի արժե-
քը կարդալու վարձու աշխատանքի սխտեմի հիման վրա,
և վորովհետեւ բանվորական ուժի տարբեր տեսակները տարբեր
արժեք ունեն և իրենց ստեղծման համար պահանջում են աշխա-
տանքի տարբեր քանակները համար ել նրանք բանվորական
շուկայում տարբեր գին ունեն։ Պահանջել հավասար կամ միայն
արդարացի վարձատրություն՝ մնալով վարձու աշխատանքի սխ-
տեմի հողի վրա—միևնույն ե, թե պահանջել ազատություն, յերբ
գոյություն ունի ստրկություն։ Այն, ինչ գուշ արդարացի կամ
որինական եք համարում, այստեղ հաշվի չի առնվամ։ Ընդհակա-
ռակը, այստեղ հարցը հանդում ե գլխավորապես այն բանի պար-
դարանմանը, թե արտադրության տվյալ սխտեմի ժամանակ ի՞նչն
է անխուսափելի և անհրաժեշտ հանդիսանում։

Բոլոր շարադրածից հետո պարզ ե, վոր բանվորական ուժի
արժեքը վերոշվում է այն գոյամիջոցների արժեքով, վորոնք ան-
երաժեշտ են բանվորական ուժն ստեղծելու, զարգացնելու, պահ-
պանելու և նրա գոյությունն ապագայի համար ապահովելու նպա-
տակով։

ՀԱՎԵԼՅԱՆ ԱՐԺԵՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ յենթադրենք, թե մեկ բանվորի համար ամեն որ անհրա-
ժյան գոյամիջոցների միջին քանակի արտադրությունը պահանջում
է 6 ժամկան միջին աշխատանք։ Յենթադրենք այսուհետեւ, թե այդ
գեց ժամկան աշխատանքը, փողով արտահայտված, հավասար է
յերեք շիլինդրի։ Այդ գեղագում յերեք շիլինդրը կլինի այդ մարդու
բանվորական ուժի ամենորյա արժեքը, կամ նրա փողային արտո-
ւանվորական ուժը արժեքը, վեց ժամ, ապա նա
հայտությունը։ Յեթե նա ամեն որ աշխատեր վեց ժամ, ապա նա
ամեն որ կարտադրեր այնքան արժեք, վոր բավական կլիներ նրան
ամեն մեծության մեջնորյա կենսամթերքների միջին քանակը ձեռք բե-
րելու համար, կամ վորը կարողանար նրա կյանքը պահպանել
իրու բանվորի։

Սակայն այդ մարդը վարձու բանվոր է։ Այդ պատճառով նա
պետք է վաճառի կապիտալիստին իր բանվորական ուժը։ Յեթե նա
վաճառում և այն որական յերեք շիլինդրով, կամ շարաթական տաս-
նութ շիլինդրով, ապա նա վաճառում է այն իր արժեքով։ Յենթա-
դրենք, թե նա մանող է։ Յեթե նա որական աշխատում է վեց ժամ,
ապա նա իր վերամշակած բամբակին ավելացնում է որական յե-
րեք շիլինդրի արժեքը։ Ամեն որ նրա այդ ավելացրած արժեքը նրա
բանվորության մեջ էկվիվալենտը կլիներ, վոր նա
աշխատավարձի կամ զնի ճիշտ եկվիվալենտը կլիներ, վոր նա
կապիտալիստին վոչ մի հավելյալ արժեքը կամ հավելյալ
քում կապիտալիստին վոչ մի հավելյալ արժեքը կամ հավելյալ
պրոդուկտ չեր մնա։ Այսպիսով, մենք այստեղ ունք առնում
պրոդուկտ պահանջության։ Կապիտալիստը, ինչպես և յուրաքան-
իսկական գժվարության։ Կապիտալիստը, ինչպես և յուրաքան-
իսկական մի գնուրդ, հատկապես գնելով բանվորի բանվորական ուժը
և նրա վիխարեն վճարելով նրա արժեքը, իրավունք է ձեռք բերում
գործադրելու կամ ողտագործելու գնած ապրանքը։ Մարդու բան-
վորական ուժն ողտագործում են, ստիպելով մարդուն աշխատել,
ճիշտ այսպես, ինչպես մեքենան ողտագործում են՝ գործարկելով
այն։ Գնելով աշխատավորի բանվորական ուժի ամենորյա կամ
ամբողջ շարաթվա արժեքը, կապիտալիստն իրավունք է ձեռք բե-
րել ողտելու այդ բանվորական ուժից կամ հակադրելու նրան
աշխատել ամբողջ որվա կամ ամբողջ շարաթվա ընթացքում։
Իհարկե, բանվորական որն ու բանվորական շարաթն ունեն վորոշ
առհանմանը, վոր մենք ուշադիր կերպով կքննարկենք հետադա-
յում։

Տվյալ մոմենտին յես պետք է ձեր ուշադրությունը հրավիրեմ մի եյական հանգամանքի վրա:

Բանվորական ուժի արժեքը վորոշում և նրա պահպանման և վերաբողության համար անհրաժեշտ աշխատանքի քանակով, սակայն այդ բանվորական ուժի ողտագործումը սահմանափակվում է բանվորի կենսական եներդիայով և ֆիզիկական ուժով: Բանվորական ուժի որական կամ շաբարական արժեքն ամենին այն չեն, ինչ այդ ուժի որական կամ շաբարական աշխատանքը, ինչպես և ձիու կերածը ամենենին այն չեն, ինչ այն ժամանակամիջոցը, վորի ընթացքում նա ի վիճակի յե կրելու ձիավորին: Բանվորի բանվորական ուժի արժեքը վորոշող աշխատանքի քանակն ամենենին վորեւ սահման չի վորոշում աշխատանքի այն քանակի համար, վորի վիճակի յե կատարելու նրա բանվորական ուժը: Վերցրեք, որինակի համար, մեր մանողին: Մենք տեսանք, վոր նա իր բանվորական ուժի ամենորյա վերականգնման համար պետք է ամեն որ ստեղծի յերեք շիլինդի արժեքը, վորին նա կկարողանա համենը որական աշխատելով վեց ժամ: Սակայն այդ նրան չի զրկում որական տաս, տասներկու և ել ավելի ժամ աշխատելու հարատլորությունից: Իսկ կապիտալիստը, աշխատավորի բանվորական ուժի իրական կամ շաբաթական արժեքը վճարելով, դրանով իրավունք ստացավ ողտավելու այդ բանվորական ուժից ամբողջ որվա կամ ամբողջ շաբաթվա ընթացքում: Այդ պատճառով նա նրան հարկադրում է որական աշխատել, դիցուք, տասներկու ժամ: Բացի այն վեց ժամից, վորն անհրաժեշտ է նրա աշխատավարձի կամ նրա բանվորական ուժի արժեքի վերաբողության համար, մանողն աշխատելու յե ելի վեց ժամ, վոր յես կանվանեմ հավելյալ աշխատանքի ժամեր, և այդ հավելյալ աշխատանքը կիրայնացի հավելյալ արժեքի և հավելյալ արդյունքի մեջ: Յեթե, որինակ, մեր մանողն իր ամենորյա վեց ժամվա աշխատանքով բամբակին ավելացնում եր յերեք շիլինդի արժեք, —վոր կազմում է նրա աշխատավարձի ձիչու եկվիվալենտը, —ապա նա տասներկու ժամվա ընթացքում բամբակին կավելացնի վեց շիլինդի արժեք և համապատասխան չափով կարտադրի ավելի մեծ քանակությամբ մանվածք: Վորովհետեւ նա իր բանվորական ուժը վաճառել է կապիտալիստին, ապա նրա ստեղծած ամբողջ արդյունքը կամ սրա արժեքը պատկանում է կապիտալիստին, իբրև նրա բանվորական ուժի ժամանակավոր տիրոջը: Այսպես ուրեմն, կապիտալիստը կան-

խավճարելով յերեք շիլինդի արժեք՝ ձեռք և բերում վեց շիլինդի արժեք, վորովհետեւ կանխավճարելով այն արժեքը, վորի մեջ բյուրեղացած է վեց ժամվա աշխատանք, նա դրա փոխարեն ստանում է մի արժեք, վորի մեջ բյուրեղացած է տասներկու ժամվա աշխատանք: Այդ սլրոցեսի ամեն որ կրկնվելու դեպքում կապիտալիստը որական կցանի յերեք շիլինդ և կհնձի վեց շիլինդ, վորոնց կեր կծառայի նորից աշխատավարձ վճարելու համար, իսկ մյուս կեսը կկազմի հավելյալ արժեքը, վորի համար կապիտալիստը վոչ մի եկվիվալենտ չի վճարում: Փոխանակության այս յեղանակը կապիտալի և աշխատանքի միջև հենց այն յեղանակն է, վորի վրա կապիտալի և կապիտալիստական արտադրությունը կամ վարձու հիմնված է կապիտալիստական սիստեմը և վորը պետք է շարունակ ստեղծի նորանոր աշխատանքի սիստեմը և վորը պետք է շարունակ ստեղծի իբրև կապիտալիստականը՝ իբրև բանվորներ՝ իբրև բանվորներ:

Հավելյալ արժեքի մակարդակը, —մյուս բոլոր պայմանների հավասարության դեպքում, —կախված է այն հարաբերությունից, վոր կա բանվորական ուժի արժեքի վերաբողության համար անհրաժեշտ աշխատանքային որվա մի մասի և ժամանակի այն ավելցուկի կամ հավելյալ ժամանակի միջև, վոր գնում է կապիտալիստի ոգտին: Հետեւաբար այն կախված է նրանից, թե ինչ չատալիսի ոգտին: Հետեւաբար այն կամ համեմատումով և ավելանում բանվորական որն այն ժամանակի համեմատումը, վորի ընթացքում բանվորն իր աշխատանքով կվերաբողությամբ, վորի ընթացքում բանվորն ուժի արժեքը, կամ կարտադրել իր դրեր միայն իր բանվորական ուժի արժեքը, կամ կարտադրել իր աշխատավարձը:

Ա. ՇԽԱԾԱՆՔԻ ԱՐԺԵՔԸ

Այժմ վերադառնանք «աշխատանքի արժեք կամ դին» արտահայտությանը:

Մենք տեսանք, վոր այդ արժեքը փաստուեն միայն բանվորական ուժի արժեքն է, վոր վորոշվում է այն ապրանքների արժեքով, վորոնք անհրաժեշտ են նրա պահպանման համար: Բայց վորովհետեւ բանվորն ստանում է իր աշխատավարձը միայն իր աշխատանքն արդեն կատարելուց հետո, և վորովհետեւ նա, բացի դրանից, գիտե, վոր այն, ինչ ինքը տալիս է կապիտալիստին, իր աշխատանքն է, ապա նրա բանվորական ուժի արժեքը կամ դին: Յեթե նրան պատկերանում է իբրև իր աշխատանքի արժեքը կամ դին: Յեթե նրա բանվորական ուժի արժեքը յերեք շիլինդ է, վորոնց մեջ իբրայնացած է վեց ժամվա աշխատանք և յեթե նա աշխատում է

տասներկու ժամ, ապա նա անխուսափելիորեն այդ յերեք շիլլինդի մեջ կտևնի տասներկու ժամվա աշխատանքի արժեքը կամ գինը, թեև իսկապես աշխատանքի այդ տասներկու ժամն իրայնացած և վեց շիլլինդի արժեքի մեջ: Սրանից բղիում է յերկակի յեզրակացություն:

Առաջին՝ բանվորական ուժի արժեքը կամ գինն ընդունում է իր իսկ աշխատանքի արժեքի կամ զնի կերպարանքը, թեև մոտիկից քննարկելիս զուրս և դաշխ, վոր աշխատանքի արժեք և զին արտահայտությունները դուրկ են իմաստից: Յերկրորդ՝ թեև հասուցվում է բանվորի որական աշխատանքի միայն մի մասը, իսկ մնացած մասը մնում է բոլորավիճն չհատուցված, այն և՝ չհատուցվող կամ հավելյալ աշխատանքը կազմում և այն ֆոնդը, վորից ծագում է հավելյալ արժեքը, կամ շահույթը, —այսուամենայնիվ ստացվում և այն տպավորությունը, թե իրը հատուցվում է ամբողջ աշխատանքը:

Այս խարուսիլ կերպարանքը վարձու աշխատանքը տարբերում է աշխատանքի մյուս պատմական ձևերից: Աշխատավարձի սիստեմի ժամանակ մինչև անգամ չհատուցված աշխատանքը հատուցված և թվում: Ի հակառակություն այս բանի, ստրկության ժամանակ մինչև իսկ հատուցված աշխատանքի մասը թվում և չհատուցված: Ակներեւ և՝ վորպեսզի ստրուկն աշխատի, պետք և ապրի, և նրա աշխատանքային որվա մի մասն այն բանի վրա յեզնում, վորպեսզի վերաբաղրի նրա ապրուստի արժեքը: Բայց վորովհետև նրա և իր տիրող միջև վոչ մի զործարք չի կնքվել, վորովհետև յերկու կողմերի միջև վոչ զնում և կատարվել, վոչ վաճառք, ապա վողջ աշխատանքը թվում է միանդամայն չվարձարված:

Վերցրեք, մյուս կողմից, ճորտ գյուղացուն, վոր գոյություն ուներ, յս կարող եմ ասել, զեռ յերեկ ամբողջ Արևելյան Յեղրուպայում: Այդ գյուղացին աշխատում եր, գիշուք, յերեք որ իր սեփական կամ իրեն հատկացված դաշտում, իսկ հետեւյալ յերեք որում պարտադիր և չհատուցվող աշխատանք եր կատարում իր տիրոջ կալվածքում: Այսպիսով, այստեղ վորոշակիորեն բաժանմած եյին աշխատանքի հատուցված և չհատուցված մասերը, բաժանված տեղով և ժամանակով, և մեր լիբերալները զայրութով Եյին լցվում այն վրդովեցուցիչ մտքի հանդեպ, թե մարդուն ստիպում են տշխատել առանց վորեեւ վարձատրության:

Իսկ ըստ եյության ամենեին նշանակություն չունի, թե ար-

գյոք մարդ շաբաթը յերեք որ իր համար դաշտումն է աշխատում և յերեք որ ձրի իր տիրոջ կալվածքում, թե նա գործարանում կամ արհեստանոցում վեց ժամ իր համար և աշխատում և վեց ժամ իր գործատուի համար, թեև այս վերջին դեպքում աշխատանքի հատուցված և չհատուցված մասերն անխղելի միացած են միմյանց, և այդ ամբողջ գործարքի եյությունը միանդամայն վարագուրված և պայմանագրի առկայությամբ և շաբաթվա վերջում ստացվող աշխատավարձով: Զհատուցված աշխատանքը մի դեպքում պատկերանում և հոժարակամ տրված, իսկ մյուս դեպքում՝ հարկադրված: Հենց այս է վողջ տարբերությունը:

Յեթե հետագա շարադրանքում յես գործածելու լինեմ «աշխատանքի արժեք» արտահայտությունը, ապա այդ կանեմ լոկիրուե արտահայտության ընդհանուր գործածական յեղանակ, փոխանակ՝ «բանվորական ուժի արժեք»:

ՇԱՀՈՒՑԹՆ ՍՏԱՑՎՈՒՄ Ե ԱՊՐԱՆՔԻՆ ԻՐ ԱՐԺԵՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՎ

Յենթաղընք, թե միջին աշխատանքի մեկ ժամը իրենից ներկայացնում և վեց ոկտոսի արժեքը, կամ թե միջին աշխատանքի տասներկու ժամը ներկայացնում և վեց շիլլինդի արժեքը: Այնուհետև յենթաղընք, թե աշխատանքի (բանվորական ուժի) արժեքը հավասար է յերեք շիլլինդի կամ վեց ժամվա աշխատանքի արդյունքը: Յեթե տվյալ աղբանքի արտադրման համար գործադրված չում նյութի, մեքենաների մեջ իրայնացված և 24 ժամվա միջին աշխատանք, ապա այդ նյութի և այլոց արժեքը հավասար կլինի 12 շիլլինդի: Յեթե կապիտալիստի վարձած բանվորը 12 ժամվա աշխատանք և աղելացնում այդ արտադրության միջոցներին, ապա այդ 12 ժամերը կներկայացնեն 6 շիլլինդի նոր արժեքը: Այս պատճառով պրոդուկտի ընդհանուր արժեքը հհասներ 36 ժամվա իրայնացած աշխատանքի և կհավասարվեր 18 շիլլինդի: Բայց քանի վոր աշխատանքի արժեքը կամ բանվորի վճարված աշխատավարձն ընդունենը կաղմում և սոսկ 3 շիլլինդ, ապա 6 ժամվա հավելյալ աշխատանքի համար, վոր մոխվել և բանվորի կողմից և իրայնացված և աղբանքի արժեքի մեջ, կապիտալիստը չի վճարի և վոչ մի եկվիվալենտ: Յեթե կապիտալիստն այդ աղբանքնը վաճառում և ըստ իր արժեքի՝ 18 շիլլինդով, այդ ճանապարհով նա իրացնում է 3 շիլլինդի արժեք նույնպես, վորի համար նա չի վճարել և վոչ մի եկվիվալենտ: Այս 3 շիլլինդը կաղմում է հավելյալ արժեք կամ շահույթ,

վորը նա յուրացնում է : Հետևաբար կապիտալիստը Յ շիլինդ չառույթ է ստանում վոչ թե իր ապրանքները վաճառելով իրենց արժեքներից բարձր , այլ վաճառելով ապրանքները հենց իրենց խնական արձենով :

Ապրանքի արժեքը վորոշվում է իր մեջ պարունակվող աշխատանքի ընդհանուր քանակությամբ : Բայց այդ աշխատանքի մի մասը ներկայացնում է այն արժեքը , վորի համար վճարվում է եկվիվալենտ աշխատավարձի ձեռվ , իսկ մյուս մասը հանդիսանում է այն արժեքը , վորի եկվիվալենտը վոչնչով չի վճարված : Ապրանքի մեջ պարունակվող աշխատանքի մի մասը վարձատրված աշխատանքն է , մյուս մասը՝ չվարձատրված աշխատանքը : Այսպիսով , ապրանքը վաճառելով ըստ իր արժեքի , վորպես աշխատանքի ընդհանուր քանակության բյուրեղացում , վոր ծախսված է նրա վրա , անդայման կապիտալիստը պետք է վաճառի շահույթով , նա վաճառում է վոչ միայն այն , ինչ նրա վրա վորոշ եկվիվալենտ է նստել , այլև այն , ինչ նրա վրա վոչ մի արժեք չի նստել , թե կուզ և բանվորի աշխատանքը նա վարձատրել է : Ապրանքի արժեքը կապիտալիստի համար և նրա խկական արժեքը՝ տարբեր բաներ են : Այս պատճառով եւ յետ կրկնում եմ , վոր նորմալ և միջին շահույթն ստացվում է ապրանքները վոչ թե իրենց խկական արժեքից բարձր , այլ իրենց խկական արժեքով վաճառելուց :

ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵԹԻ ՏԱՐԲԵՐ ՄԱՍՆԵՐԸ

